

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

ՀՀ ՍՓՅՈՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ



Քաղաքականություն

Մոսկուայում տեղի կ'ունենայ «հայոց ցեղասպանությունն ոճրագործության է մարդկության դեմ հանրահաարը

Սփյուռքի նախարարն ու Ուկրաինայի դեսպանը քննարկեցին հայոց լեզուի պահպանման խնդիրը Ուկրաինայում

Հիդա Չորոյեան. Ֆրանսիայի Մենատր չի կարողանայ ընդունել Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը

Երիտանացի խորհրդարանականները համոզում են իրենց կառավարությանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը

ՀՀ սփյուռքի նախարարություն

ՀՀ Սփյուռքի նախարարը ընդունեց Տեղահանումների եւ բռնադատումների երրուպական միության դեկլարիան

ՀՀ սփյուռքի նախարարություն այցելեց ՀԲԸՄ Մոնդեիդեյի «Կոունկ» երգչախումբը

ՀՀ սփյուռքի նախարար Հրանտյշ Յակոբեանն ընդունեց «Արի տուն» ծրագրի հիւրընկալ քնտանիքների Գերմանիա մեկնող երիտասարդներին

«Ցալի, յիշողության եւ պայքարի կ'ոթողներէ պատկերագիրը ներկայացնում է Հայոց ցեղասպանության յուշարձաններն աշխարհում

ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ «Ցալի, հիշողության եւ պայքարի կոթողներ» պատկերագրի շնորհանդեսը

Սփյուռքի նախարարությունում քննարկուել են Լիբանանի հայ երիտասարդության հիմնախնդիրներին առնչուող հարցեր

ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացաւ հայ լրագրողների 5-րդ համաժողովի գործադիր մարմնի նիստ

ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացաւ մամուլի ասուլիս՝ ի պատասխան Թ.Պողոսեանի անհիմն «մեղադրանքների»

Հրանոյշ Յակոբեանը Ֆրանսիայի խորհրդարանի պատգամատուր Ռենե Ռուբէին քննարկել են հայ-ֆրանսիական յարաբերութիւնները

Ֆրասիահայ բարերար Սարգիս Բեդոյեանը պարգևատրուեց «Պողոս Նուբար» մեդալով

Սփյուռքի նախարարութիւնը պատասխանում է Թամար Պօղոսեանի անհիմն մեղադրանքներին

Սփյուռք

Ռումինիայում յարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

Ստամբուլում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին ակցիայ է րնթանում

Մինսկի հայ համայնքը յարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

Սիմոն Այնեջեան. Աշխարհի մնացած երկրները պետք է հետեւեն Կիպրոսի օրինակին եւ ճանաչեն Հայոց ցեղասպանութիւնը

Երուսաղէմի հայերը Թուրքիայից պահանջում են ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը

Ապրիլի 24-ին եւ 25-ին Բելրութում տեղի կ'ունենան Հայոց ցեղասպանութեան 96-ամեակին նուիրուած միջոցառումներ

Իսպանիայում յարգանքի տուրք են մատուցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

Վրաստանի հայերը բողոքի ակցիայ են անցկացրել Թբիլիսիում Թուրքիայի դեսպանատան դիմաց

Ուրուգուայի հայ համայնքը յարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

Երոզայի հայերի համագումար. Միջազգային հանրութիւնն այլեւս մտադիր չէ լռել Հայոց ցեղասպանութեան մասին

Ապրիլի 24-ին Կիեւում երկու իսաչքար կ'օժեն

Ապրիլի 25-ին Կիպրոսի հայ համայնքը երթ կ'անցկացնի՝ նուիրում շայնց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

Կալիֆորնիայի հայերն անցկացրել են «օրամայ, կատարիր խոստումդ եւ ճանասիր շայնց ցեղասպանութիւնքէ ակցիան

Արխագիայի վարչապետը համագործակցութիւն է խոստանում հայերին

Աղայանական այդ տօնը Բոյնիս- Խաչէնում

Հայկական Վերտուալ Համալսարանի հիմնադիր նախագահ պրոֆէսոր Երուանդ Զօրեանը Թրիլիսիում

Կոնգրեսական Էդ Ռոյսը հաւաստիացրել է ԱՄՆ հայ համայնքին, որ կը շարունակի սատարել նրան

Բէյրութում երեք հայկական ասանդական կուսակցութիւնները կը նշեն շայնց ցեղասպանութեան 96-րդ տարելիցը

“Շայնց ցեղասպանութիւնը 1914-18թթ. Վրացական պարբերականներում” գրքի շնորհանդէսը Թրիլիսիում

Թրիլիսիում նշել են հայ բարերար Ալեքսանդր Մանթաշովի մահուան 100 տարին

Ապրիլի 19-ին հոլանդահայերը Հաագայում ցոյց անցկացրեցին շայնց ցեղասպանութեան 96-րդ տարելիցի կապակցութեամբ

Չեխիայի հայ համայնքը կ'ոգեկոչի շայնց ցեղասպանութեան զոհերի յիշատակը

Նիդերլանդներում տոնել են «միացեալ հայերը Հոլանդիայումէ միութեան եւ «վանէ կիրակնօրեալ դպրոցի 10-ամեակը

Ապրիլի 16-ին յունահայ երիտասարդութիւնը բողոքի ցոյց անցկացրեց Աթէնքում Թուրքիայի դէպանատան դիմաց

Ապրիլի 23-ին Լոնդոնում՝ Օքսֆորդ սթրիթում, տեղի կ'ունենայ շայնց ցեղասպանութեան զոհերի յիշատակի երթ

Ֆրանսիայի հայ համայնքը նախագահ Սարկոզիին մեղադրում է դաւաճանութեան մեջ

[Հասարակություն](#)

1.5 միլիոն ծառ, **1.5** միլիոն նահատակ

Ուկրաինայում բազմաթիւ միջոցառումներով կը յարգեն Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը

Ռուսաստանի հասարակությունը յարգանքի տուրք կը մատուցի Հայոց ցեղասպանութեան զոհերին

The Financial Times. Կոտորածը Դիարբերիւր նահանգում սատանայական մասշտաբների է հասել

[Մշակոյթ](#)

Պատմարան Ռայսոնոյ Կետրկեանը ներկայացնում է «հայոց ցեղասպանություն. Ամբողջական պատմությունը գիրքը

Թբիլիսիի հայկական թատրոնը կը վերանորոգուի վրացական պետութեան միջոցներով

Թուրք դերասանուհին խաղացել է Մեծ Եղեռնի մասին հայկական ֆիլմում

Բերութի «վահէ Սէթեանէ հրատարակչութիւնն առաջին անգամ մասնակցում է Գրքի երեսանեան տօնավաճառին

Լուսին Դինքը ֆիլմ կը նկարահանի Վիլեամ Սարոյեանի մասին

Բրատիսլաւայում Էկումենիկ պատարագ է մատուցուելու՝ նուիրում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

Հայ կատարողներով թուրքական երգչախումբը կարող է արժանանալ **2012-ի** Խաղաղութեան Նոբելեան մրցանակի

ԱՄՆ-ում կը բացուի ամերիկահայ նկարիչ Արթուր Փինաջեանի անհատական ցուցահանդէսը

Ապրիլի **24-ի** նախաշեմին Թուրքիայում լոյս կը տեսնի Վերժինէ Սվազեանի գիրքը Մեծ Եղեռնի մասին

Քաղաքականություն

Մոսկուայում տեղի կ'ունենայ «հայոց ցեղասպանությունն ոճրագործության է մարդկության դեմ հանրահալարը

2011-04-21

Հանրահալարի նպատակն է դատապարտել Հայոց ցեղասպանությունն ու Թուրքիայից պահանջել պաշտոնապես ճանաչել այն: Հանրահալարի կազմակերպիչներն են «ռուս-հայկական համագործակցությունը եւ «ռուսաստանի հայերի միությունը»:

Հանրահալարում ելոյթ կ'ունենան ՌԴ Պետդումայի պատգամաւորներ, ՌԴ ազգային համայնքների ղեկավարներ, վերլուծական ինստիտուտների ներկայացուցիչներ: Հանրահալարի անցկացումը համաձայնեցուած է Մոսկուայի քաղաքապետարանի հետ:



Սփյուռքի նախարարն ու Ուկրաինայի դեսպանը քննարկեցին հայոց լեզուի պահպանման խնդիրը Ուկրաինայում

2011-04-21

Ողջունելով հիրին՝ Հ.Յակոբեանը ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությունն ու ծրագրերը:

Քննարկուեցին փոխադարձ հետաքրքրություններ կայացնող հարցեր, այդ թւում նաեւ Ուկրաինայում հայ համայնքի եւ Հայաստանի Հանրապետությունում ուկրաինական համայնքի հիմնախնդիրներին: Մասնաւորապէս հարց բարձրացուեց «տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եւրոպական խարտիայի շրջանակներում Ուկրաինայում պահպանուող լեզուների շարքում հայոց լեզուն ընդգրկելու մասին»:

Պայմանաւորուածութիւն ձեռք բերուեց առաջիկայում համատեղ աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետությունում Ուկրաինայի հայ համայնքի օրեր կազմակերպելու մասին:



Հիլդա Չոբոյեան. Ֆրանսիայի Սենատը չի կարողանայ ընդունել Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրէնքը

2011-04-19

Այդ մասին PanARMENIAN.Net ի թղթակցի հետ զրոյցում յայտարարել է Եւրոպայի Հայկական դաշնութեան նախագահ (EAFJD) հիլդայ Չոբոյեանը: «նախագահը, կառավարությունն ու Սենատի մեծամասնությունը դեմ են օրէնքին, սակայն

մենք չենք կարող ձեռքներս ծալած նստել, հայ համայնքը կը շարունակի օրինագիծը Մենատի օրակարգում ընդգրկելուն ուղղուած ջանքերը,-ասել է նա:

Օրէնքի ընդունման նախաձեռնողը սոցիալիստների խմբակցութիւնն է, որը 2006թ. Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ընդունուած նմանատիպ օրինագծի հեղինակն էր:

Նախօրէին թուրքական Ձլմ-ները տեղեկութիւններ էին տարածել այն մասին, որ Ֆրանսիայի Մենատի Սահմանադրական կոմիտէն հաւանութիւն չի տուել օրինագծին:



Բրիտանացի խորհրդարանականները համոզում են իրենց կառավարութեանը ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը

2011-04-19

Քերոլայն Քօքսը ջրեց այն եղեւնին, որը տնկել էր 2002 թ.:

«Իմ զգացմունքները միշտ ձեր ժողովրդի հետ են: Մենք յիշում ենք 1915 թ. սարսափելի ու ողբերգական իրադարձութիւնները: Ինձ համար շատ հաճելի է, որ այսօր Հայաստանում ինձ հետ են եւ Լորդերի պալատի, եւ Համայնքների պալատի ներկայացուցիչները, ովքեր ներառուած են բրիտանահայկական համակուսակցական խմբում: Մեզ համար շատ կարեւոր է, որ մենք ոչ միայն Հայաստանում ենք, այլեւ մի նշանակալի վայրում, որը խորհրդանշում է այդ ողբերգական իրադարձութիւնները,- Հայոց Մեծ Եղեւնի զոհերի յիշատակին ծաղիկներ դնելուց յետոյ նշեց բարոնուհի Քօքսը:

Լորդ Լինդոն Հարիսոնը, ով առաջին անգամ էր Հայաստանում, նշեց, որ բազմաթիւ երկրներում է այցելել ժողովուրդների յիշատակին նուիրուած յուշահամալիրներ, սակայն այն, ինչ տեսաւ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում եւ Ցեղասպանութեան թանգարանում, ամենատպաւորիչն էր:

«մեր խորհրդարանական խումբը շատ մեծ ջանքեր է գործադրում, որպէսզի իրազեկի մարդկանց, թէ ինչ է Հայոց Ցեղասպանութիւնը, ինչ է տեղի ունեցել, քանզի շատ-շատերն իսկապէս տեղեակ չեն դրանից: Փորձում ենք համոզել բրիտանական կառավարութեանը, որպէսզի, եթէ հնարաւոր է, երբեւիցէ ճանաչուի Հայոց Ցեղասպանութիւնը,- յայտարարեց Բարոնուհի Շրիլայ Ֆլեդերը: Իսկ տիկին Շիլան առաջիկայում հնարաւորութիւն տեսնում է, որ Մեծ Բրիտանիան պաշտօնապէս ընդունի ու ճանաչի Հայոց

Յեղասպանութիւնը հարցադրմանը ի պատասխան նա ասաց. «շարժումը կայ, առաջ ենք գնացել: Բայց դեռ առկայ են շատ ու շատ հարցեր...»:

Համայնքների պալատի անդամ Ջոն Ուիթինգդեյլն ընդգծեց, որ ինչպէս շատերը Բրիտանիայում, այնպէս էլ ինքը տեղեակ չի եղել Հայոց Յեղասպանութիւնից եւ այդ իմաստով նա կարելորեց այցը Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ Յեղասպանութեան թանգարան: «պէտք է այնպէս անել, որ նման դէպքերը երբեւէ չկրկնուեն: Ես տիկին Քօքսի հետ մեկնելու եմ Ղարաբաղ, որպէսզի իմ աչքով տեսնեմ, թէ ինչ է կատարում այնտեղ, որպէսզի վերադառնանք Բրիտանիա եւ կարողանանք ասել, թէ ինչ է իրականում այնտեղ տեղի ունենումէ,- ասաց Համայնքների պալատի ներկայացուցիչը, հաղորդում է ՀՀ ԱԺ հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցների հետ կապերի վարչութիւնը:

ՀՀ սփիւռքի նախարարութիւն
ՀՀ Սփիւռքի նախարարը ընդունեց Տեղահանուածների եւ քոնադատուածների եւրոպական միութեան ղեկավարին
2011-04-23

Այցի ընթացքում քննարկուեցին փոխադարձ հետաքրքրութիւն ներակայցնող հարցեր, ինչպէս նաեւ «նորավանքէ գիտակրթական հիմնադրամի հետ կնքուող պայմանագրի դրոյթները: Քննարկում կայացաւ նաեւ Ադրբեջանից տեղահանուած հայ փախստականների շահերը ներկայացնող հ/կ-ների ներկայացուցիչների հետ:

Վաղը պատուիրակութիւնը Ծիծեռնակաբերդում կը մասնակցի Հայոց Յեղասպանութեան գոհերի ոգեկոչման արարողութեանը, իսկ յետոյ կը մեկնի Լեռնային Ղարաբաղ:



ՀՀ սփիւռքի նախարարութիւն այցելեց ՀԲԸՄ Մոնդելիդէլոյի «Կռունկ» երգչախումբը
2011-04-22

Ողջունելով երգչախմբի այցը՝ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը ներկայացրեց նախարարութեան գործունէութեան հիմնական ուղղութիւններն ու առաջիկայ ծրագրերը՝

ուղղուած Սփիւռքում հայապահպանութեան, մասնագիտական ներուժի համախմբման եւ հայրենադարձութեան խնդիրներին:

Հ.Յակոբեանն անդրադարձաւ «Հարաւային (Լատինական) Ամերիկայի հայ համայնքների կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցութեան» ծրագրի շրջանակներում իրականացուող աշխատանքներին, որոնց նպատակն է օժանդակել տարածաշրջանի

հայութեան հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանը:

Նախարարն ընդգծեց հայ համայնքի մեծ դերակատարութիւնն Ուրուգուայի կողմից առաջինն աշխարհում Հայոց Ցեղասպանութեան փաստը ճանաչելու եւ այն դատապարտելու գործում:

Հ.Յակոբեանը շեշտեց համահայկական կարեւորագոյն հիմնախնդիրների լուծման գործում Հայրենիքի եւ Սփիւռքի միասնականութեան անհրաժեշտութիւնը:

Շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար՝ երգչախմբի անդամներն արտայայտեցին իրենց անսահման ոգեւորութիւնն ու երջանկութիւնը Հայրենիքում գտնուելու կապակցութեամբ եւ պատրաստակամութիւն յայտնեցին բոլոր հնարաւոր միջոցներով աջակցել Հայրենիքից հեռու իրենց համայնքում հայկական ազգային աւանդոյթները, լեզուն եւ մշակոյթը պահպանելուն ուղղուած՝ ՀՀ սփիւռքի նախարարութեան ծրագրերի իրականացմանը:

Ապրիլի 26-ին Երեւանի «Առնոյ Բարաջանեան» համերգասրահում (Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում) եւ ապրիլի 28-ին Գիւմրիի Արուեստների ակադեմիայի համերգասրահում ՀՀ սփիւռքի նախարարութեան աջակցութեամբ տեղի կունենան «Կռունկ» երգչախմբի համերգները: Երգչախմբի հիւրախաղերը մաս են կազմում Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակին նուիրուած միջոցառումների:



ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանն ընդունեց «Արի տուն» ծրագրի հիւրընկալ ընտանիքների Գերմանիա մեկնող երիտասարդներին


2011-04-22

Ողջունելով ներկաներին եւ յաջողութիւն մաղթելով ծրագրին՝ նախարար Հ.Յակոբեանը

նշեց, որ այն կարելի է համարել «Արի տուն» ծրագրի շարունակութիւն: Զրուցելով Գերմանիա մեկնող իւրաքանչիւր երիտասարդի հետ՝ նախարար Հ.Յակոբեանը խորհուրդ տուեց Սփիւռքում անցկացնելիք օրերի ընթացքում դրսեւորել օրինակելի վարքագիծ, քանի որ նրանք ներկայացնում են ոչ միայն իրենց ընտանիքը, դպրոցը կամ համայնքը, այլ նաեւ ՀՀ սփիւռքի նախարարութիւնը եւ, որ ամենակարեւորն է՝ Հայաստանի Հանրապետութիւնը:

Ապրիլի 23-30-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետութիւն մեկնող եօթ երիտասարդներից հինգը Երեւան քաղաքից են, իսկ երկուսը՝ Քասախ գիւղից: Երիտասարդները կը հիւրընկալուեն Հեսսենի «Հայ մշակութային միութեան» ներկայացուցիչների ընտանիքներում: Նրանք կը մասնակցեն մի շարք մշակութային միջոցառումների (այցելութիւններ մշակութային հաստատութիւններ, ֆիլմի դիտում եւ այլն), իսկ ապրիլի 24-ին կը մասնակցեն նաեւ Հայոց Յեղասպանութեան տարելիցի կապակցութեամբ Ֆրանկֆուրտում կազմակերպուող երթին:

Երիտասարդներին յաջողութիւններ մաղթեց եւ այցի հետ կապուած կազմակերպչական հարցերի շուրջ նրանց հետ զրուցեց նաեւ ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի ղեկավար Տիրդուս Զաքարեանը:



«Ցաւի, յիշողութեան եւ պայքարի կ'ոթողներէ պատկերագիրը ներկայացնում է Հայոց ցեղասպանութեան յուշարձաններն աշխարհում
2011-04-21

Աշխատութեան շնորհանդէսի ժամանակ այսօր ՀՀ սփիւռքի նախարար Հրանտյշ Յակոբեանը նշեց, որ պատկերագիրը վկայում է Սփիւռքի կազմակերպութիւնների, անհատների՝ Հայ դատի պայքարին հաւատարմութեան մասին: Այն նաեւ երախտագիտութեան իւրօրինակ արտայայտութիւն է պետական եւ տեղական իշխանութիւններին, որոնք նպաստել են իրենց

երկրում, համայնքում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած յուշարձանների եւ համալիրների ստեղծմանը:

Նախարար Հ.Յակոբեանի խօսքերով՝ Հայոց ցեղասպանութիւնը թուրքական իշխանութիւնների կողմից մտածուած, մանրագնին ծրագրուած եւ սառնասրտօրէն իրագործուած հրեշագործութիւն է, որը սկիզբ է առել 19-րդ դարի90-ականներին, իր գագաթնակէտին հասել 1915թ.-ին, շարունակուել մինչեւ 1923թ.-ը: Այդ տարիներին աւելի քան երկու միլիոն հայ է նահատակուել: Վիճակագրական տուեալների համաձայն՝ կոտորուել է 66 քաղաքների եւ 2500 գիւղերի հայ բնակչութիւնը:

Աւերուել եւ թալանուել է մօտ 1500 դպրոց ու վարժարան, 2050 եկեղեցի, 300 վանք, ոչնչացուել 20 հազար ձեռագիր մատեան: Գաղթական են դարձել եւ բռնի կրօնափոխ արուել հարիւր հազարաւոր հայեր: Հ.Յակոբեանը նկատեց, որ Հայոց ցեղասպանութեան ծրագրին զուգընթաց թուրքերն իրականացրել են նաեւ հայութեան հոգեւոր սպանողը: Վերացուել եւ այսօր էլ վերացուում են

հայկական հոգեւոր-մշակութային արժէքները, որոնք հայ ժողովրդի՝
Բիբլիական երկրի տեղը լինելու վկայութիւններն են:

Ներկայում եւս հետեւողականօրէն թուրքացում են Արեւմտեան
Հայաստանի հայկական վերջին անուանումները, աւերում հայկական
մշակոյթի յուշարձանները, խեղաթիւրում եւ կեղծում է պատմութիւնը:
«այս գիրքը իւրօրինակ ապտակ է պատմութեան կեղծարարներին, բոլոր
նրանց, ովքեր ժխտում են Հայոց ցեղասպանութիւնը,-ընդգծեց նախարարը՝
շնորհակալութիւն յայտնելով սփիւռքի հայկական
կազմակերպութիւններին, դիւանագիտական ներկայացուցչութիւններին՝
հրատարակութեան լոյս ընծայմանն աջակցութեան համար:

Պատկերագրքում ներկայացուած են 288 յուշակոթողների լուսանկարները,
դրանց մասին հակիրճ տեղեկութիւններ: Երեւանի պետական
համալսարանի Հայոց պատմութեան ամբիոնի վարիչ Բաբկէն
Յարութիւնեանի խօսքերով՝ աշխատութիւնը կամուրջ է
սփիւռքահայութեան եւ հայրենիքի միջեւ, դատավճիռ՝ Արեւմտեան
Հայաստանում եւ ողջ Օսմանեան կայսրութեան տարածքում Հայոց
ցեղասպանութեան ոճրագործների նկատմամբ: Պատմաբանը ընդգծեց
տարբեր ձեռնարկներով դրսում հայանպաստ կարծիք ձեւաւորելու
կարեւորութիւնը, առաջարկեց պատկերագիրքը լոյս ընծայել տարբեր
լեզուներով, այդ թւում՝ թուրքերէն:

«Կէտք է ճանաչուեն Հայոց ցեղասպանութիւնն ու հայ ժողովրդի
իրաւունքները եւ թուրքերը կէտք է հատուցեն իրենց կատարած
ոճրագործութեան համարէ,-նշեց պատմաբանը: Նրա առաջարկին՝
աշխատութեան մէջ ներառել նաեւ գրքի քարտեզը, նախարար Հ.Յակոբեանը
պատասխանեց, որ նախարարութիւնը նոր նախաձեռնութիւն ունի՝ ստեղծել
Սփիւռքի քարտեզ առհասարակ՝ յուշարձաններով, եկեղեցիներով,
դպրոցներով, սակայն պատմաբանի կարծիքը հաշուի կ'առնուի Մեծ եղեռնի
100 ամեակի կապակցութեամբ աշխատութեան վերահրատարակութեան
ժամանակ:

ՀՀ Ազգային ժողովի պաշտպանութեան, ներքին գործերի եւ ազգային
անվտանգութեան հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ, ՀՅԴ
ներկայացուցիչ Հրայր Կարապետեանը նկատեց, որ «յուշարձանները մեր
անձնագրերն են, այն փաստաթղթերը, որով մենք ապացուցում ենք Հայ
դատը:

Մշակութային ցեղասպանութեան մասին, սակայն, ըստ նրա, շատ քիչ է
խօսում, այնինչ՝ ողջ քաղաքակիրթ մարդկութեան աչքի առջեւ

ոչնչացուեցին Արցախի եւ Նախիջեւանի, մասնաւորապէս՝ Հին Ջուղայի հայկական յուշարձանները, որի մասին բարցրաձայնել է անհրաժեշտ: ՀՀ ԳԱ ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի տնօրէն Աշոտ Մելքոնեանը վստահութիւն յայտնեց, որ իւրաքանչիւր հայ, լինելով օտար երկրում, ցանկանում է գտնել հայկական մասունք, հայկական ներկայութիւն՝ եկեղեցի ու դրա մօտ տեղադրուած Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը յաւերժացնող յուշակոթող, իսկ ստեղծուած աշխատութեան մէջ դրանք կողք կողքի են՝ վաւերագրուած եւ ներկայացուած տեղակայման վայրի անուանումով:

«ցաւօք, նման յուշարձաններ չկան հէնց այնտեղ, որտեղ իրագործուեց Մեծ եղեռնը՝ Արեւմտեան Հայաստանում, սակայն կը գայ ժամանակը, որ մենք կը կարողանանք 1,5 միլիոն յուշարձան կանգնեցնել այնտեղէ,-ընդգծեց պատմաբանը:



ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ «Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ» պատկերագրի շնորհանդեսը

2011-04-21

Ապրիլի 21-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ «Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ» պատկերագրի հայերեն եւ անգլերեն տարբերակների շնորհանդեսը: Գրքում ներառված են Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ աշխարհի տարբեր երկրներում գտնվող Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված 288 հուշարձաններ:

«Այս պատկերագիրը ցույց է տալիս, որ հայ ժողովրդի պայքարը չի դադարում հայդատը իրագործելու եւ արդարության հաղթանակի հասնելու համար: «Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ»-ը յուրօրինակ ապտակ է պատմության կեղծարարներին, բոլոր նրանց, ովքեր ժխտում են Հայոց ցեղասպանությունը», - շնորհանդեսի ժամանակ ասաց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հկաոբյանը:

ԵՊՀ պատմության ամբիոնի վարիչ Բաբկեն Հարությունյանը կարեւորելով գրքի գոյությունը, ասաց. «Սա յուրօրինակ կամուրջ է սփյուռքի եւ Հայաստանի միջեւ, ինչպէս նաեւ լավ մեթոդ դրսում հայանպաստ կարծիք ձեւավորելու: Բայց ամենակարեւոր գործառույթը՝ ձեւ է ստիպել թուրքերին հատուցել իրենց կատարած ոճրագործության համար:

Նա նաեւ կարուորեց գրքի տարբեր լեզուներով, մասնավորապէս

թուրքերենով տպագրելը, քանի որ դա հնարավորություն կտա Թուրքիայի բնակիչներին տեղեկացված լինել իրականությանը, եւ ոչ թէ խեղաթուրված ճշմարտությանը:

«Հիմա միջազգային ասպարեզում ավելի շատ խոսվում է մեր տարածաշրջանի քաղաքական եւ տնտեսական խնդիրների մասին: Այն ինչ իրականանում է մշակութային ցեղասպանություն:

Ողջ քաղաքակիրթ մարդկության աչքի առջեւ ոչնչացվեցին Արցախի եւ Նախիջեւանի, մասնավորապէս՝ Հին Ջուղայի հայկական հուշարձանները, որի մասին բարցրաձայնել է անհրաժեշտ», - նկատեց ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՅԴ ներկայացուցիչ Հրայր Կարապետյանը, շեշտելով գրքի կարեւորությունը մշակույթի պահպանման գործում:



Սփիւռքի նախարարութիւնում քննարկուել են Լիբանանի հայ երիտասարդութեան հիմնախնդիրներին առնչուող հարցեր

2011-04-21

Հ.Յակոբեանը ներկայացրեց երիտասարդութեան տարի յայտարարուած 2011 թուականի ընթացքում ՀՀ սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ կազմակերպուելիք երիտասարդական ծրագրերն ու միջոցառումները՝ կարեւորելով երիտասարդութեան դերը Սփիւռքում հայապահպանութեան, համահայկական խնդիրների լուծման առումով: Քննարկուեցին Լիբանանի հայ երիտասարդութեան հիմնախնդիրներին առնչուող հարցեր: Անդրադարձ կատարուեց 2011թ. ՀՀ սփիւռքի նախարարութեան «արի տունէ ծրագրին Լիբանանի հայ երիտասարդների մասնակցութեան հարցին:



ՀՀ սփիւռքի նախարարութիւնում կայացաւ հայ լրագրողների 5-րդ համաժողովի գործադիր մարմնի նիստ

2011-04-20

Հայաստանից նիստին մասնակցում էին գործադիր մարմնի անդամներ Լրատուամիջոցների համահայկական ընկերակցութեան նախագահ Տիգրան Յարութիւնեանը, Հայաստանի ժուռնալիստների միութեան նախագահ Աստղիկ Գեւորգեանը եւ Լիբանանի «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանտահարեանը, ինչպէս նաեւ ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի տեղեկատուութեան եւ

հեռահաղորդակցութեան վարչութեան տեղեկատուական-վերլուծական բաժնի պետ Նուեր Նալբանդեանը: Համացանցի միջոցով գործադիր մարմնի նիստին ԱՄՆ-ից մասնակցում էր «Արմինյըն Միրոր Սփեքթէյթըր» շաբաթաթերթի խմբագիր Յակոբ Վարդիվարեանը, Ֆրանսիայից՝ «Նոր Եառաջ» թերթի գլխավոր խմբագիր Ժիրայր Զօլաքեանը, Ռուսաստանի Դաշնութիւնից՝ «Նուէ Կովչեզ» ամսաթերթի գլխավոր խմբագիր Գրիգոր Անիսոնեանը:

Ողջունելով նիստի մասնակիցներին՝ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը կարեւորեց Սփիւռքի հայկական գանգուածային լրատուամիջոցների դերը հայապահպանութեան գործում: Հ.Յակոբեանն ընդգծեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման գործընթացը Սփիւռքի ԶԼՄ-ում առաւել ակտիւ լուսաբանելու անհրաժեշտութիւնը՝ այս առումով յատկապէս կարեւորելով ոչ հայկական ԶԼՄ-ում աշխատող հայազգի լրագրողների դերակատարութիւնը: Նախարարը ծանօթացրեց նաեւ երիտասարդութեան տարի յայտարարուած 2011 թուականի ընթացքում ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից իրականացուելիք ծրագրերը:

Քննարկուեցին հայ լրագրողների 5-րդ համաժողովից յետոյ լրատուական դաշտում առկայ դրական զարգացումներին, հայկական լրատուամիջոցների տարածաշրջանային հաւաքների կազմակերպման, Սփիւռքի հայկական լրատուամիջոցների տարածաշրջանային համակարգող մարմինների ստեղծման եւ «Հայկական աշխարհ» նախագիծը ներկայացնելուն առնչուող հարցեր, մանրամասներ ներկայացուեց յունիսի 26-ից յուլիսի 15-ն անցկացուելիք երիտասարդ լրագրողների դպրոց-համաժողովի ծրագրի եւ նախապատրաստական աշխատանքների վերաբերեալ:

Գործադիր մարմնի սփիւռքեան անդամները ներկայացրեցին իրենց տարածաշրջաններում լրատուական դաշտի հիմնախնդիրները: Յստակեցուեցին հայկական լրատուամիջոցների տարածաշրջանային հաւաքների կազմակերպման ժամկէտները: Պայմանաւորուածութիւն ձեռք բերուեց գործադիր մարմնի նիստերն այսուհետ գումարել առնուազն ամիսը մէկ անգամ յաճախականութեամբ:



**ՀՀ սփիւռքի նախարարութիւնում կայացաւ
մամուլի ասուլիս՝ ի պատասխան Թ.Պօղոսեանի
անհիմն «մեղադրանքների»**

2011-04-19

Ասուլիսի ընթացքում բանախօսներն անդրադարձան վերջին շրջանում «Մէկ ազգ, մէկ

մշակոյթ» հիմնադրամի գործադիր տնօրէն Թամարա Պօղոսեանի կողմից ՀՀ սփյուռքի նախարարութեան եւ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հասցէին ներկայացրած «մեղադրանքներին՝ կոնկրետ փաստերով հերքելով վերջինիս շինծու, անհիմն «մեղադրանքները», որոնց նպատակը «շանտաժն է ու զրպարտութիւնը»:

Նախարարի տեղակալ Ս.Պետրոսեանը, յղումներ կատարելով ՀՀ օրէնքներին եւ «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» հիմնադրամի կանոնադրութեանն ու հոգաբարձուների խորհրդի նիստերի արձանագրութիւններին, կէտ առ կէտ անդրադարձաւ տարբեր ամբիոններից Թ.Պօղոսեանի հնչեցրած «մեղադրանքներին»՝ բացայայտելով դրանց մտացածին, անհեթեթ եւ անհիմն լինելու փաստը:

«Թամարայ Պօղոսեանի՝ անմեղ գառնուկի կերպարանքով հնչեցրած «մեղադրանքները» կեղծ են ու շինծու, դրանք փչած փուչիկներ են, որոնք դատարկ են ու մտացածին եւ դրանց նպատակը շանտաժն է ու զրպարտութիւնը», - ասաց ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալը՝ աւելացնելով, որ իրենք նախկինում չէին պատասխանում Թ.Պօղոսեանին, համոզուած լինելով, որ չարժէ պատասխանել անհիմն եւ փաստեր չպարունակող «մեղադրանքներին»:

Ս.Պետրոսեանը նշեց, որ նրա կողմից բարձրացուած աղմուկի իրական պատճառն այն է, որ «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը թոյլ չի տուել անարդիւնաւէտ ծախսել պետական բիջէով նախատեսուած գումարները՝ կանխելով չարաշահումները, իսկ Թ.Պօղոսեանը, բարձրացրած աղմուկով, փորձում է շեղել հանրութեան ուշադրութիւնը կեղծիքներից:

Նախարարի տեղակալը որպէս օրինակ ներկայացրեց այն փաստը, որ «մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնի շրջանակներում անցկացուող կատարողական արուեստի վեց օրերի համար Թ.Պօղոսեանը «օւացիա» կազմակերպութեանը՝ համերգների տեխնիկական սպասարկման, բեմական ծառայութիւնների համար, ըստ պայմանագրի պայմանաւորուել էր վճարել 25 միլիոն դրամ: ՀՀ սփյուռքի նախարարութիւնը հարցն ուսումնասիրել է պարզել էր, որ ներկայացուած գինը շուկայականից անհամեմատ բարձր է: Արդիւնքում այդ կազմակերպութեանը վճարուել է 18 միլիոն դրամ՝ անտեսելով Թ.Պօղոսեանի յամառ պահանջները՝ վճարել իր ասած գումարը:

Ս.Պետրոսեանը մանրամասներ ներկայացրեց նաեւ Թ.Պօղոսեանի մէկ այլ

չարաշահման վերաբերեալ: Այսպես, կատարողական արուեստի վեց օրերի ընթացքում իր անմիջական պարտականությունների կատարման համար Թ.Պողոսեանը պահանջում էր իրեն վճարել մօտ 2.7 միլիոն դրամ հաւելավճար: Նման ահռելի չափերի հաւելավճարներ էր պահանջում նաև հիմնադրամի աշխատակիցների համար, որոնց մեծ մասը վերջինիս հարազատներն են (քոյր, քրոջ դուստր եւ այլն):

«Այդպիսի հաւելավճարներ մեր երկրում հնարաւոր չեն, Թ.Պողոսեանը հիմնադրամը վերածել է ընտանեկան բիզնեսի՝ այնտեղ աշխատանքի ընդունելով իր հարազատներին», - վրդովուած աւելացրեց Ս.Պետրոսեանը:

Ս.Պետրոսեանն անթոյլատրելի համարեց Թ.Պողոսեանի գործելաճճը՝ շեշտելով, որ վերջինս, ղեկավարելով հիմնադրամը, ծախսել է միայն պետական բիջլեով յատկացուած գումարները եւ չի փորձել ծրագրեր իրականացնել՝ հիմնադրամի կանոնադրութեամբ նախատեսուած այլ աղբիւրներից գումարներ ներգրաւելով: Աւելին, ըստ օրէնսդրութեան, հիմնադրամի վարչակառաւարչական ծախսերը չեն կարող գերազանցել հիմնադրամի բիջլէի 20 տոկոսը, մինչդէռ Թ.Պողոսեանը 2009թ. ծրագրով նախատեսուած 18.6 միլիոն դրամի մեծ մասը յատկացրել էր հիմնադրամի աշխատակիցների աշախատաւարձի ֆոնդին՝ առանց հոգաբարձուների խորհրդի որոշման: Առանց այդպիսի որոշումների է նա հաստատել հիմնադրամի 2010թ. հաստիքացուցակը եւ դրոյքաչափերը:

Նախարարի տեղակալը փաստեց, որ ՀՀ Սփիւռքի նախարարութիւնում ոչ մի կոռուպցիոն երեւոյթ չի կարող լինել: Իսկ որեւէ կազմակերպութեան հետ գործ ունենալու դէպքում նախարարութիւնը փորձում է անել հնարաւորինը՝ կոռուպցիոն ռիսկերը բացառելու համար:

Ասուլիսին մասնակցող «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, «հայաստանէ համահայկական հիմնադրամի նախագահ Արա Վարդանեանը յաւելեց, որ Թ.Պողոսեանը, գերազանցելով իր լիազօրութիւնները, կատարել է աուդիտի ընտրութիւն, նշանակել է աշխատաւարձեր, հաստատել է կառուցուածք, ինչը ոչ թէ գործադիր տնօրէնի իրաւասութիւնն է, այլ հոգաբարձուների խորհրդի:

Ս.Պետրոսեանն իր խօսքը եզրափակեց՝ յաւելելով, որ 2011թ. ՀՀ սփիւռքի նախարարութիւնը ոչ մի ծրագիր չի պատուիրակել «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» հիմնադրամին, իսկ ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի ղեկաւար Ֆիրդուս Զաքարեանը դիմել է դատարան գրաւարտութեան եւ բարի համբաւի արատաւորման մեղադրանքով՝ ընդդէմ Թ.Պողոսեանի:

Հրանոյշ Յակոբեանը Ֆրանսիայի խորհրդարանի պատգամաւոր Ռենէ Ռուքէին քննարկել են հայ-ֆրանսիական յարաբերութիւնները

2011-04-19

ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանն ապրիլի 19-ին ընդունեց Ֆրանսիայի խորհրդարանի պատգամաւոր Ալֆորուիլի (Փարիզի շրջակայքում հայաշատ քաղաք) քաղաքապետ Ռենէ Ռուքէին: Ողջունելով հիւրին՝ նախարարն ասաց, «Ուրախ եմ հայ-ֆրանսիական յարաբերութիւնների զարգացման համար: Ուրախ եմ նաեւ մեր պետութիւնների միջեւ յարաբերութիւնների համապարփակ զարգացման համար: Վերջերս էլ սկսել ենք համագործակցել նաեւ Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հետ եւ ուսանողները պրակտիկա են անցնում այստեղ՝ Սփյուռքի նախարարութիւնում: Վստահ եմ նաեւ հայութեան համար կարելորագոյն խնդրի առումով՝ Ֆրանսիայում որեւէ մէկը կասկածի տակ չի առնում Հայոց ցեղասպանութեան եղելութիւնը:

«Ես ներկայ եմ եղել Ֆրանսիայում Էրդողանի ելոյթին, որը փոքրամասնութիւնների հանդէպ ակնյայտ ագրեսիայ էր ներառում: Ասեմ, որ ելոյթը յաջողուեց, քանի որ նրա խօսքի աւարտին ոչ ոք չծափահարեց: Այդ ելոյթը ձախողեց նրա այցը Ֆրանսիայ: Ի ապացոյց հայ-ֆրանսիական ջերմ յարաբերութիւնների, արդէն իսկ Ֆրանսիայի Սենատի մայիսի 4-ի օրակարգում է Ցեղասպանութեան ժխտողականութիւնը քրէօրէն պատժելու օրինագիծը: Բացի այդ ես աջակցելու եմ, որպէսզի իմ ղեկավարած քաղաքում բնակուող հայերի մասին գիրք ստեղծուի: Եւ ի հարկէ այսուհետ Հայաստանում Ֆրանսիական համալսարանի աւելի շատ ուսանողներ հնարաւորութիւն կ'ունենան Ֆրանսիայում ուսանելուէ,- շեշտեց Ռենէ Ռուքէն:

Նախարարը, շնորհակալութիւն յայտնելով այցի համար, ընդծեց. «Ֆրանսիան պետական քաղաքական կատարեալ մոդել է ազգային փոքրամասնութիւնների հանդէպ հանդուրժողականութեան եւ հաւասար իրաւունքների տեսանկիւնից: Շատ կ'ուզենայինք, որ Թուրքիան իրական ժողովրդավար երկիր դառնար, որովետեւ առաջին հերթին հէնց հայերի հանդէպ գործուած ոճիրն իրական գնահատական կստանա»:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ ֆրասիահայ բարերար Սարգիս Բեդոյեանը եւ մի շարք ֆրանսիացիներ:



Ֆրասիահայ բարերար Սարգիս Բեդոյեանը պարգևատրուեց «Ողորմ Նուբար» մեդալով

2011-04-19

ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը ընդունեց ֆրասիահայ բարերար Սարգիս Բեդոյեանին, ում յովհաննաւորութեամբ տարիներ շարունակ Ֆրանսիայի հայկական Դպրոցասէր եւ Սբ. Մեսրոպ վարժարանների սաների համար կազմակերպուում է ամենամեայ այցելութիւն Հայաստան՝ ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանութեան զոհերի ոգեկոչման միջոցառումներին մասնակցելու համար:

«Շատ ուրախ էք, որ կարողանում էք երիտասարդներին բերել Հայաստան: Երիտասարդութեան կապը Հայաստանի հետ կարելոր է, քանի որ նրանք իրօրինակ կամուրջ են դառնում Հայաստանի եւ սփիւռքի միջեւ: Ընդունէք խնդրեմ յայտնի հայ բարեր Պօղոս Նուբար փաշայի պատուին սահմանուած ՀՀ սփիւռքի նախարարութեան մեղալը», - ասաց ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը:

«Երախտապարտ եմ նման պատուի արժանացնելու համար: Միշտ պատրաստ եմ աջակցել համահայկական ծրագրերի իրականացմանը: Ուրախ եմ, որ արդէն առկայ են նման գործունէութեան արդիւնաւետութիւնն ապահովող գործիքներ եւ յատկապէս ուրախ եմ ՀՀ սփիւռքի նախարարութեան հետ լայնածաւալ համագործակցութեան համար», - նշեց Սարգիս Բեդոյեանը:

Դպրոցասէր եւ Սբ. Մեսրոպ վարժարանների սաներն ի նշան երախտիքի կատարեցին ֆրանսիական եւ հայկական երգեր:



Սփիւռքի նախարարութիւնը պատասխանում է Թամար Պօղոսեանի անհիմն մեղադրանքներին

2011-04-18

Նրա խօսքերով, Պօղոսեանի բոլոր մեղադրանքները չեն համապատասխանում իրականութեանը: Այդ առումով Պետրոսեանը նշել է, որ Պօղոսեանը նման աղմուկ է բարձրացրել, քանի որ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը թոյլ չի տուել, որպէսզի պետքի չէից հիմնադրամի համար յատկացուած փողերը ծախսուեն ոչ արդիւնաւետ ճանապարհով: Ինչպէս հաղորդել է Ստեփան Պետրոսեանը, «մէկ ազգ, մէկ մշակոյթ փառատօնի շրջանակներում Թամար Պօղոսեանը պայմանագիր է կնքել «Օվացիաէ կազմակերպութեան հետ, որը բեմական ծառայութիւններ է տրամադրել 25 մլն դրամով: «սակայն նախարարութիւնը որոշակի հետազօտութիւններ է անցկացրել եւ պարզել, որ այդ գումարը շուկայական գնի համեմատ զգալիօրէն բարձր է, եւ նախարարութիւնն այդ կազմակերպութեանը վճարել է 18 մլն դրամ: Բայց Պօղոսեանը համաձայն չի եղել այդ որոշման հետ եւ պահանջել է, որպէզի կազմակերպութեանը

վճարեն այն գումարը, որը նշուած է եղել պայմանագրում,- ասել է նա:

Անդրադառնալով Պօղոսեանի գործունէութեար՝ Ստեփան Պետրոսեանն ասել է, որ փառատօնի շրջանակներում Թամար Պօղոսեանը կատարուած աշխատանքի համար լրացուցիչ իրեն 2.8 մլն դրամ հաւելավճար է դուրս գրել:

Մփիւռք

Ռումինիայում յարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

2011-04-24


Բուխարեստի Սբ Հրէշակապետաց Հայոց Մայր եկեղեցում, Մեծ Պահքի պատարագից յետոյ, կատարուեց յիշատակի հոգեհանգիստ, այնուհետեւ Ռումինիայում ՀՀ դեսպանութեան, Հայ Առաքելական եկեղեցու Ռումինիայի թեմի եւ Ռումինիայի Հայոց միութեան կողմից ծաղկեպսակներ զետեղուեցին Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած խաչքար-յուշարձանին: Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցի միջոցառմանը ելոյթներով հանդէս եկան Հայ Առաքելական եկեղեցու Ռումինիայի թեմի առաջնորդ Տաթև Վրդ Յակոբեանը, Հայոց միութեան նախագահ Վարուժան Ոսկանեանը եւ Ռումինիայում ՀՀ դեսպան Համլէտ Գասպարեանը: «այսօր արդէն քսան տարի պետական ծրագրուած քաղաքականութիւն է տարւում Հայաստանի Հանրապետութեան դէմ, ինչը դրսեւորում է հայաստանը շրջափակելու միջոցով, տնտեսապէս մեկուսացնելով, միջազգային կազմակերպութիւններում հակահայ քայլերով ճնշումբանեցնել մեր ժողովրդի կամքի վրայ՝ հրաժարուելու իր իրաւունքների պաշտպանութիւնից: Ամենավտանգաւորը հայատեաց քարոզչութեան բոլոր բոլորման ու ծաւալումն է, պատմութեան եւ իրողութեան խեղաթիւրումը, նեգացիոնիզմը, ինչը, հաշուի առնելով այդ պետութեան ահռելի հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ ներկայ հասարակութիւնների անտեղեակութիւնը իրականութեան մասին, պատկերացնում էք, թէ ինչավերածութիւններ է գործում եւ ինչպիսի սպառնալիքներ ներկայացնում մեր ժողովրդի անվտանգութեան, մեր իսկ գոյութեան, մեր երկրի կենսունակութեան համար: Այդ սպառնալիքը թէեւ անմիջականօրէն մեզ է ուղղուած, սակայն այն վտանգ է ներկայացնում ողջ տարածաշրջանի եւ աշխարհի համար: Քանզի ժամանակակից աշխարհում ուժի դիրքերից թելադրուած քաղաքականութիւնը, ինչը մշտապէս վարուել եւ վարում է մեր դէմ, անտեսելով եւ ոտնահարելով հայ ժողովրդի իրաւունքները, չի կարող ոչ միայն լուծել մեր միջեւ եղած հակասութիւնները, այլեւս պահովութիւն խոստանալ որեւէ մեկին, իր ելոյթի մէջ ասաց դեսպան Համլէտ Գասպարեանը:

«ուստի միջազգային հանրության պատասխանատու կեցուածքը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, դեմոկրատական հասարակութիւնների եւ մտաւորականների բողոքն ու ձայնը այդ անժամանցելի ոճիրի դէմ, թուրքական հասարակութեան զանազան շերտերի, մտաւորականութեան ու քաղաքական ուժերի օրէցօր դրսեւորուող ընդվզումը եւ պահանջը սեփական իշխանութիւններից միակ պայմանն է թուրքական կառավարութեանն ստիպելու՝ վերջ տալու այդ անհեռանկար քաղաքականութեանը, փակելու այդ ամօթալի էջը եւ փորձելու իր հարեւանի հետ կառուցելու աւելի յուսալի ապագաէ, ասաց Հայաստանի դեսպանը:

Մինչ այդ, Հայոց մշակութային տան ողջ երկարութեամբ, Կարոլ Ա-ի պողոտայի դիմահայեաց մասում, պաստառի վրայ ցուցադրուում էին Արմին Վեգների եւ այլոց վաւերական լուսանկարները, որոնք պատմում էին հայերի տեղահանութեան եւ կրած տառապանքների մասին: Նկարաշարը պէտք է ցուցադրուի մի քանի օր:

Ցեղասպանութեան զոհերի յիշատակի միջոցառումներ տեղի ունեցան նաեւ հայաբնակ Կոստանցա, Սուչաւայ, Եաշ, Պիտեշտ, Բոտոշան, Գալաց, Բակաու, Ֆոկշան, Տուլչեայ, Կլուժ, Գեոլայ, Գեորգեն եւ Դումբրաւեն քաղաքներում: Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ յայտարարութիւններով Ռումինիայի Սենատում հանդէս կը գան սենատոր, Ռումինիայի Հայոցմիութեան նախագահ Վարուժան Ոսկանեանը, իսկ Պատգամաւորների պալատում, պատգամաւոր, Ռումինիայի Ազգային փոքրամասնութիւնների խմբի ղեկավար Վարուժան Փամբուկչեանը:

Մայիսի վերջին նախատեսուում է Ռումինիայի գիտութիւնների ակադեմիայում կազմակերպել դասախօսութիւն Հայոց ցեղասպանութեան եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան վերաբերեալ, հաղորդում են ՀՀ ԱԳՆ մամլոյ ծառայութիւնից:



Ստամբուլում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին ակցիայ է ընթանում

2011-04-24

Ինչպէս PanARMENIAN.Net ի թղթակցին հաղորդեցին Ստամբուլից, ուստիկանութիւնը իսկում է ցուցարարներին ազգայնականների հնարաւոր յարձակումներից: Ակցիան անցկացուում է արդէն երկրորդ տարին անընդմէջ, անցեալ տարի նման միջադէպեր տեղի չեն ունեցել: Հաւաքուածները կարմիր մեխակներ եւ սպանուած հայ մտաւորականների՝

Գրիգոր Զոհրապի, Դանիէլ Վարուժանի, Սիամանթոյի, Հրանտ Դինքի լուսանկարներն են պահում:

Մինսկի հայ համայնքը յարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

2011-04-24

Միջոցառման ընթացքում ելոյթ ունեցաւ Բելոռուսում Հայաստանի դեսպան Արմէն Խաչատրեանը: Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցին նուիրուած միջոցառմանն աւելի քան 200 հայ մասնակցեց:



Միմոն Այնեջեան. Աշխարհի մնացած երկրները պէտք է հետեւեն Կիպրոսի օրինակին եւ ճանաչեն Հայոց ցեղասպանութիւնը

2011-04-24

Ինչպէս հաղորդել է աղբիւրը, մէկ շաբաթ առաջ Կիպրոսի խորհրդարանում նոյնպէս Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցին նուիրուած միջոցառում է կայացել:

«Կիպրոսն արդէն ճանաչել է Հայոց ցեղասպանութիւնը, Կիպրոսի խորհրդարանը երկու անգամ ընդունել է Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման մասին բանաձեւը: Մենք պահանջում ենք, որպէսզի աշխարհի մնացած երկրները հետեւեն Կիպրոսի օրինակին եւ ճանաչեն այդ պատմական փաստը,- ասել է Միմոն Այնեջեանը:



Երուսաղէմի հայերը Թուրքիայից պահանջում են ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը

2011-04-24

Ինչպէս PanARMENIAN.Net ի թղթակցին հաղորդեց «հայ Դատե գրասենեակի ղեկավար Ժորժետտայ Աւագեանը, յուշարձանից սկսուեց երթը դէպի Իսրայէլում Թուրքիայի դեսպանատուն, որին աւելի քան 200 մարդ էր մասնակցում, այդ թում՝ հրէաներ: Երթի մասնակիցները Թուրքիայից պահանջում էին ճանաչել 1915-1923թթ. Օսմանեան կայսրութիւնում իրագործուած Հայոց ցեղասպանութիւնը:

Ժորժետտայ Աւագեանը հաղորդել է նաեւ, որ այս տարի Տիրոջ Գերեզմանի տաճարում հայ եւ յոյն հոգեւորականների միջեւ սովորաբար տեղ գտնող ընդհարումներ չեն եղել:



Ապրիլի 24-ին եւ 25-ին Բելրուսում տեղի կ'ունենան Հայոց ցեղասպանութեան 96-ամեակին նուիրուած միջոցառումներ

2011-04-24

«անթիլիասի միջոցառմանը ելոյթ կ'ունենայ Նորին Սրբութիւն Արամ Ա-ն եւ Լիբանանում Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեանը: Ապրիլի 25-ին վաղ առաւօտից մինչեւ ուշ երեկոյ Բէյրութում Հայաստանի դեսպանատունը սգալի ամսաթուին նուիրուած մի շարք միջոցառումներ կ'անցկացնի՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցին: Կը ցուցադրուեն ֆիլմեր, կը բացուի ցուցահանդէս: Հրաւիրուած են Լիբանանի խորհրդարանի պատգամաւորներ, դիւանագիտական կորպուսը, հասարակական կազմակերպութիւններ եւ ՁԼՄ ներկայացուցիչներէ,- ասել է Կանդահարեանը:

Իսպանիայում յարգանքի տուրք են մատուցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

2011-04-24

Նրա խօսքով, իւրաքանչիւր իսպանական քաղաքում, որտեղ հայեր են բնակուում, ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած միջոցառումներ են տեղի ունեցել:

Ընդ որում, նա նկատել է, որ այդ միջոցառումները համեմատելի չեն նախորդ տարիների միջոցառումների հետ, երբ ողջ հայ համայնքը միայն մէկ, բայց մեծ միջոցառում էր անցկացնում: Օրինակ՝ 2007 թուականին Վալենսիայում հայ համայնքը լայնամասշտաբ ակցիայ անցկացրեց՝ միջազգային հանրութեանը կոչ անելով ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը:

Վրաստանի հայերը բողոքի ակցիայ են անցկացրել Թբիլիսիում Թուրքիայի դեսպանատան դիմաց

2011-04-24

Վերջերս Վրաստանի հայկական կազմակերպութիւնները վրաստանի նախագահին ու խորհրդարանին նամակ են յղել՝ կոչ անելով ճանաչել Օսմանեան կայսրութիւնում իրագործուած Հայոց ցեղասպանութիւնը: Հայկական կազմակերպութիւնները վրացի պատգամաւորներին առաջարկել են Հայոց ցեղասպանութեան ճանաչման մասին օրինագիծ նախաձեռնել:

Ուրուգուայի հայ համայնքը յարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

2011-04-24

Ուրուգուայի հայ համայնքը յարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին: Ապրիլի 24-ին Ուրուգուայի մայրաքաղաք Մոնտեւիդէոյում՝ Ս.Ներսէս Շնորհալի եկեղեցում, Սուրբ Զատկի պատարագից յետոյ տեղի ունեցաւ ժողովրդական հաւաք՝ եկեղեցու բակում գտնուող Մեծ Եղեռնի յուշակոթողի դիմաց: Խօսքով հանդէս եկան

ՀՅԴ «արմենիա» երիտասարդական միության անդամները:

Ապրիլի 25 -ին քաղաքի Անկախության հրապարակում կը տեղադրուի ծաղկեպսակ սբ. Արթիգասի յուշարձանի մօտ՝ որպես յարգանքի տուրք այդ երկրի հայասեր կառավարութեանը եւ ժողովրդին: Ապրիլի 26-ին Ուրուգուայի խորհրդարանի նախագահութեան նախաձեռնութեամբ սենատի նախասրահում տեղի կ'ունենայ ոգեկոչման ձեռնարկ, որտեղ իր խօսքով հանդէս կը գայ Բուենոս Այրեսից հրաւիրուած, Արգենտինայի արդարադատութեան նախարարութեան Մարդու իրաւունքների եւ խտրականութեան դէմ պայքարի գրասենեակի համադրող Պեդրոյ Մուրադեանը:

Ապրիլի 29-ին Երիտասարդական միութիւնները Մոնտեւիդէոյի գլխաւոր պողոտայից մինչեւ Մոնտեւիդէոյի համալսարանի շրջափակը «արդարութեան համարէ քայլարշաւ կ'անցկացնեն, որի ժամանակ տեղում կը կատարուի յատուկ ոգեկոչման արարողութիւն:



Եւրոպայի հայերի համագումար. Միջազգային հանրութիւնն այլեւս մտադիր չէ լռել Հայոց ցեղասպանութեան մասին

2011-04-23

96 տարի է անցնում հայութեան դէմ իրագործուած ցեղասպանութիւնից, սակայն այսօր էլ թուրքական պետականութեան կազմակերպած այդ հրէշաւոր հարուածի հետեւանքները կրում են Հայաստանը, հայ ազգը եւ աշխարհի տարբեր կողմերում ապրող իւրաքանչիւր հայ քաղաքացինէ,- ասում է ուղերձում: Դրանում նշում է, որ անվիճելի փաստ է այն, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը հասել է իր զարգացման կիզակետին եւ, որ «առաջադէմ մարդկութիւնն ու համաշխարհային հանրային կարծիքն իրենց վճռական քայլերով ապացուցեցին, որ այլեւս պատրաստ չեն մոռացութեան մատնել մարդկութեան դէմ իրականացուած այս ոճիրը: Այս գործընթացի զարգացումը ցոյց է տալիս, որ միջազգային հանրութեան կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումն անխուսափելի է: Հաղորդագրութեան մէջ ընդգծում է, որ մարդու իրաւունքների պաշտպանութեան առիթով բոլոր խօսակցութիւնները՝ կը լինեն կեղծ, եթէ բոպէական քաղաքական, տնտեսական եւ այլ կարգի շահերի համար լռութեան մատնուի հայերի դէմ իրականացուած մեծ ոճիրը, եւ «ամբողջ ժողովրդի դահիճների ժառանգները ստանան այս կամ այն կարգի հովանաւորութիւն: Քանի դեռ հայերի դէմ կատարուած ցեղասպանութիւնը չի ընդունուել որոշ պետութիւնների կողմից եւ նրա հետեւանքները չեն վերացել, վերջիններիս պետք է դիտել որպէս ոճրագործութեան մասնակցի կամ գործակցիէ:

AAE-ն յայտարարում է, որ միայն թուրքերի զոջումը եւ միջազգային հանրութեան կողմից տրուած միանշանակ գնահատականներն ու իրագործուած ոճրա•ործութեան դատապարտումը կարող են լինել երաշխիք, որ Թուրքիան նորից չի սկսի ցեղասպանութեամբ լուծել իր քաղաքական հարցերը: «միայն այս ձեւով Թուրքիան կարող է ապացուցել իրեն եւ աշխարհին, որ այլեւս չի համարում ոճրագործ պետութիւն: Հայերի նկատմամբ թուրքական ոճրային քաղաքականութիւնը չվերսկսելու նախանշան կարող է հանդիսանալ նաեւ այն, որ Թուրքիան հրաժարուի Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական դաշինքի մէջ մտնելուց, եւ Հայաստանը շրջափակման ենթարկելու 15-ամեայ քաղաքականութիւնից: Թուրքիան, երբ ձեռք է մեկնում հայերին, այդ ձեռքը չի կարող ներկուած լինել հայ ժողովրդի նախնիների արեան հետքերով,- ընդգծում է ուղերձում: AAE-ն աւելացրել է նաեւ, որ միջազգային հանրութեան կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումը Ֆրանսիայից եւ Ռուսաստանից յետոյ, ամենից առաջ՝ Ամն-ի, Մեծ Բրիտանիայի եւ մանաւանդ Գերմանիայի կողմից ունի մեծ նշանակութիւն՝ ոչ միայն որպէս հայերի նկատմամբ արդարացի մօտեցում, այլեւ համայն մարդկութիւնից այս ոճրագործութիւնը արմատախիլ անելու համար:



Ապրիլի 24-ին Կիւում երկու խաչքար կ'օժեն

2011-04-23

Ապրիլի 24-ին Ուկրաինայի բոլոր հայկական եկեղեցիներում ու մատուռներում հոգեհանգստեան կարգ կը կատարուի Ցեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակին:

Ապրիլի 24-ին Ուկրաինայի բոլոր հայկական եկեղեցիներում ու մատուռներում հոգեհանգստեան կարգ կը կատարուի Ցեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակին: Կիւում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը կը յարգեն մատուռում, որը գտնուում է այն տարածքում, որը յատկացրել են ՀԱԷ Ուկրաինայի թեմի իշխանութիւնները եկեղեցու կառուցման համար, յայտնում է Analitika.at.ua-ն:

Ապրիլի 25-ին Կիպրոսի հայ համայնքը երթ կ'անցկացնի՝ նուիրում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

2011-04-23

Կիպրոսի հայ համայնքը ձեւաւորուել է Հայոց ցեղասպանութիւնից յետոյ, երբ Կիլիկիայում կոտորածից փրկուած հայերն ապաստան գտան Կիպրոսում:

Կիպրոսի Հայ Դատի յանձնախմբի յայտարարութեան մէջ ասում է, որ

Հայոց ցեղասպանության 100-ամեակին՝ 2015թ. ողջ աշխարհի հայերը կը միաւորուն՝ պահանջելով արդարութիւն ու հատուցում: Յայտարարութեան մէջ ասում է, որ հայերը բողոքում են թուրքական կառավարութեան դէմ, որը ժխտում է Ցեղասպանութեան փաստը:



Կալիֆորնիայի հայերն անցկացրել են «Օբամայ, կատարիր խոստումդ եւ ճանաչիր Հայոց ցեղասպանութիւնը ակցիան

2011-04-22

Անուանի երաժշտ, System of A Down խմբի երաժիշտ ու մարդու իրաւունքների պաշտպան

Սերժ Թանկեանը կոչ է արել հաւաքուածներին կանգնել ստուղիայի դարպասների առջեւ՝ վանկարկելով 2008-ի Օբամայի նախընտրական խօստումը՝ «որպէս ԱՄՆ նախագահ ես կը ճանաչեմ Հայոց ցեղասպանութիւնը: Ցուցարարները վանկարկել ես այդ խօսքերը 15 րոպէ շարունակ:

Սերժ Թանկեանը շնորհակալութիւն է յայտնել հաւաքուածներին եւ ասել, որ ցոյցն ուղղուած է ոչ միայն նրան, որ Օբամայի վարչակազմը չի կատարել խոստումը, այլ նաեւ բոլոր խոստումներին, որոնք նա չի կատարել:

Ամերիկայի Հայ դատի յանձնախմբի Արեւմտեան բիւրոյի տարածաշրջանային տնօրէն Էնդրիւ Կը զիրեանի խօսքերով, ANCA-ն նամակ է ուղարկել նախագահ Օբամային՝ խնդրելով ծաղկեպսակ դնել Մոնթեբելոյում հայ նահատակների յուշարձանին Լոս Անջելես կատարած այցի ընթացքում: «Եթէ Օբաման ցանկանում է վերընտրուել, ապա հայ համայնքը եւ ակտիւիստները, որոնք հանդէս են գալիս ցեղասպանութեան դէմ, սպասում են, որպէսզի նա ասի «ցեղասպանութիւն է բառն ապրիլի 24-ի ուղերձում: Ժամանելով Կալիֆորնիա, որը ցեղասպանութեան զոհերի մօտ մէկ միլիոն ժառանգների տունն է դարձել, նախագահը պէտք է այցելի Նահատակների յուշարձանէ,- ասել է Կզիրեանը, գրում է Asbarez-ը:

Բոլոր տեղական հեռուստաալիքներն ուղիղ հեռարձակում են իրականացրել: Հեռուստահաղորդումների ժամանակ ցուցադրուել են Օբամայի խօսքերով տեսահոլաւակներ, որտեղ դեռ սենատոր Օբաման ասում է «որպէս ԱՄՆ նախագահ ես կը ճանաչեմ Հայոց ցեղասպանութիւնը:

Արխագիայի վարչապետը համագործակցութիւն է խոստանում հայերին

2011-04-22

Սուրէն Կերսելեանը Արխագիայի վարչապետին ծանօթացրեց հայ համայնքի կառուցուածքի եւ գործունէութեան հիմնական ուղղութիւնների հետ, պատմեց Հայաստանի եւ սփիւռքեան հայկական

կազմակերպությունների հետ իր ղեկավարած կազմակերպութեան կապերի մասին: Մասնաւորապէս, Հայ համայնքի ղեկավարը յայտնեց հայաստանեան “երկիր-մեղիա” հեռուստաալիքի նկարահանող խմբի վերջերս Արխազիայ կատարած այցելութեան մասին, որը հնգօրեայ նկարահանումների ընթացքում Արխազիայում բնակուող հայերի մասին պատմող բաւականին շատ տեսանիւթեր է պատրաստել:

Հանդիպման ընթացքում քննարկուեցին Սուխումի 9 միջնակարգ դպրոցի վերանորոգման, սպորտային խմբակների կազմակերպման եւ այլ հարցեր: Սերգէյ Շամբան այդ խնդիրների լուծման նպատակով տարբեր գերատեսչությունների տուեց մի շարք յանձնարարականներ:

Հանդիպման աւարտին վարչապետը նորից շնորհաւորելով Սուրէն Կերսէլեանին ընտրուելու կապակցութեամբ, խոստացաւ համագործակցել եւ ցուցաբերել աջակցութիւն Արխազիայի հայ համայնքի գործունէութեանը:



Աղայանական այդ տօնը Բոլնիս- Խաչէնում

2011-04-22

Այս անգամ միջոցառումը նուիրուած է Ղ.

Աղայեանի ծննդեան 171 եւ մահուան 100-ամեայ տարելիցին: Բոլնիս-խաչէնը Աղայեանի տուն-թանգարանում կրկին դռները լայն բացեց ընդունելու Թբիլիսիից եւ Հայաստանից ժամանած

հիւրերին, որոնց թում էին Վրաստանում արտակարգ եւ լիազօր դեսպան Յովհաննէս Մանուկեանը, դեսպանութեան այլ աշխատակիցներ, Վիրահայոց թեմի առաջնորդ ‘ եպիսկոպոս Վազգէն Միրզախանեանը, Վրաստանի խորհրդարանի պատգամաւոր Արմէն Բայանդուրեանը, Վրաստանի նախագահի խորհրդական ‘ Վրաստանէ թերթի խմբագիր Վան Բայբուրթեանը, «Վրաստանի հայերի միութեանէ նախագահ Գենա Մուրադեանը, Վրաստանի հայ գրողների «վերնատունեմիութեան նախագահ Ժորա Մնխչեանը ‘ «վերնատանէ 12 անդամների հետ, բանաստեղծ-թարգմանիչ Գիւրի Շահնազարը, «կամուրջ տարեգրքի խմբագիր ‘ բանաստեղծուհի Անահիտ Բոստանջեանը, Հայաստանի հայ գրողների միութեան անդամներ ‘ մանկագիր –բանաստեղծ Երուանդ Պետրոսեանը, «Էջմիածինէ ամսագրի խմբագիր Արշակ Մադոյեանը, «բոլնիս-խաչէնէ հայրենակցական միութեան նախագահ Ալբերտ Ոսկանեանը, լրագրող-ստեղծագործող Վանիկ Սանթրեանը եւ ուրիշներ: Տօնին ներկայ էին Բոլնիսի շրջանի ղեկավար Իոսէր Լալիաշուիլին, այլ աշխատակիցներ, Բոլնիսիի գիւղապետը, դպրոցի տնօրէնը, ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ, գիւղի բնակիչներ:

Հիւրերն իրենց ելոյթում ընդգծեցին Աղայեանի գրական - մանկավարժական ժառանգը եւ նշեցին հայ դասականներին մեծարելու իրենց պարտքը, իսկ Վ. Բայրութեանը խոստացաւ այսուհետեւ գիւղի դպրոցականների համար նաեւ ամենամեայ այցելութիւն կազմակերպել Թբիլիսիի Խոջիվանքի պանթոն, որպէսզի ծաղիկներ դնեն իրենց հայրենակցի եւ Խոջիվանքում հանգչող մեր այլ գրողների շիրիմին: Միջոցառումն ավարտուեց գիւղի դպրոցականների գրական-երաժշտական ելոյթով: Ղ. Աղայեանի արձանին դրուեց մեր նորանշանակ դէսպանի նուէր ծաղկեպսակը եւ այլ ծաղկեփնջեր:

31 դպրոցի հայոց լեզուի ուսուցչուհի Մանանա Կարապետեան

Հայկական Վիրտուալ Համալսարանի հիմնադիր նախագահ պրոֆէսոր Երուանդ Զօրեանը Թբիլիսիում

2011-04-22

Այցի շրջանակներում Երուանդ Զօրեանը այցելեց Վիրահայոց Թեմին կից գործող «հայարտունէ կենտրոն, «սուրբ Եղիաէ, «սուրբ Գրիգոր Նարեկացիէ կիրակնօրեայ դպրոցներ, հանդիպում ունեցաւ Վիրտուալ համալսարանի ուսանողների հետ եւ անձամբ ներկայացրեց նշուած ուսումնական հաստատութեան հնարաւորութիւններն ու նախագծերը:

Յարկ է նշել, որ Վիրահայոց Թեմին կից գործող «հայարտունէ կենտրոնի կրթական բաժնի ղեկավարի Մարիայ Առաքելովայի նախաձեռնութեամբ ուսուցման այս համակարգը այս տարուանից յաջողութեամբ սկսել է գործել է նաեւ Վրաստանում:

Մարիայ Առաքելովայի խօսքերով, համալսարանը նապատակ ունի իր մասնաճիւղը բացել նաեւ Վրաստանում, ինչը լաւագոյն հնարաւորութիւն կարող է հանդիսանալ Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչների համար հայոց լեզուի եւ պատմութեան ուսուցման տեսակէտից:



Կոնգրէսական Էդ Ռոյսը հաւաստիացրել է ԱՄՆ հայ համայնքին, որ կը շարունակի սատարել նրան

2011-04-22

Հանդիպման ժամանակ ԱՀՀ ներկայացուցիչները շնորհակալութիւն են յայտնել կոնգրէսական Ռոյսին Հայաստանին ու Լեւոնային Ղարաբաղին մշտապէս սատարելու համար օգնութեան

տրամադրման, Ադրբեջանին ռազմական օժանդակութեան դադարեցման ու Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցում: Էդ Ռոյսն ընդգծել է, որ կը

շարունակի սատարել ԱՄՆ հայ համայնքին հայ ժողովրդի շահերն առաջ մղելու հարցում՝ մտահոգություն յայտնելով Ադրբեջանի ռազմատենչ ճարտասանության վերաբերեալ: «մենք անհամբեր սպասում ենք կոնգրեսական Ռոյսի հետ համատեղ աշխատանքին եւ ողջունում ենք նրա հաւատարմութիւնը մարդու իրաւունքների պաշտպանութեանը, յայտարարել է ԱՀՀ Հարաւային Կալիֆորնիայի հոգաբարձուների խորհրդի անդամ Լիզա Գալուստեանը:

Բերութում երեք հայկական ասանդական կուսակցութիւնները կը նշեն Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցը

2011-04-22

Ինչպէս գրում է լիբանանեան The Daily Star թերթը, բոլոր երեք կուսակցութիւնները հանդէս են եկել յայտարարութեամբ, որում միջազգային հանրութեանը կոչ են անում ճանաչել Օսմանեան կայսրութիւնում իրագործուած Հայոց ցեղասպանութիւնը:

Ապրիլի 24-ին Կաթողիկոս Արամ Ա-ն նաեւ հանդէս կը գայ ուղերձով՝ Զատիկի տօնի առթիւ:

“Հայոց ցեղասպանութիւնը 1914-18թթ. Վրացական պարբերականներում” գրքի շնորհանդէսը Թբիլիսիում

2011-04-21

Ժողովածուի մէջ ընդգրկուած են Վրաստանի ազգային խորհրդարանական գրադարանի վրացական պարբերականների բաժնում պահուած նիւթեր, մասնաւորապէս՝ Հայոց մեծ եղեռնը լուսաբանող նիւթեր վրացական 3 տպագիր թերթերից՝ “սաքարթուելո” (“վրաստան”), “սամշոբլո” (“հայրենիք”), “սախալխոյ փուրցելի” (“ժողովրդական թերթիկ”) եւ “կլդէ” (“Ժայռ”) ամսագրից:

“ժողովածուի հիմնական նպատակն է խթանել Վրաստանի գիտական շրջանակներին ուսումնասիրելու նիւթերի եւ փաստերի այն հսկայ շտեմանարը, որը պահուում է վրացական պահոցներում, դրանով իսկ լրացնելով Հայոց ցեղասպանութեան արդէն գոյութիւն ունեցող պատկերը”, - ասում է գրքի վրայ աշխատող ուսանող Ալեքսանդր Օհանեանը:

“վրաստանի հայ ուսանողների միութիւն” կազմակերպութեան ղեկավար Արմէն Աղաջանովի խօսքերով. “գրքի հրատարակման գլխաւոր նպատակն է նաեւ ներկայացնել հասարակութեանը 1914-18թթ. վրացական տպագիր մամուլում պահպանուած, մինչ օրս հանրութեանն անյայտ նիւթեր եւ դրանով աջակցել վրացական հասարակութեանը ուսումնասիրել ու գնահատել Հայերի ցեղասպանութեան փաստը, ինչը տասնամեակներ

շարունակ արգելուած է եղել Վրաստանում”:

Գրքի նախաբանը գրել է պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆէսոր Օթար Զանելիձէն, ով նշել է, որ տուեալ ժողովածուն իր մէջ ամփոփում է նիւթեր, որոնք արտայայտում են նշուած ժամանակահատուածի վրացական մամուլի եւ վրացական քաղաքական կազմակերպութիւնների տեսակէտները եւ ներկայացնում են վրաց ժողովրդի վերաբերմունքը այն ողբերգութեանը, որ իրագործուեց Թուրքիայում հայերի նկատմամբ:

Գրքի վրայ աշխատել են “վրաստանի հայ ուսանողների միութիւն” հասարակական կազմակերպութեան անդամներ Ալեքսանդր Օհանեանը, Արթուր Միրզոյեանը, Ռազմիկ Բաղալեանը, Գեորգ Եաղութովը եւ Էդուարդ Սահակեանը:



Թբիլիսիում նշել են հայ բարերար Ալեքսանդր Մանթաշովի մահուան 100 տարին

2011-04-20

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու իրահայոց թեմի «հայարտունէ կենտրոնի եւ Վրաստանում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան նախաձեռնութեամբ, ապրիլի 19-ին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու գաւթում, որտեղ հանգչում է Ալեքսանդր Մանթաշովի աճիւնը, կայացաւ յուշ-ցերեկոյթ եւ հոգեհանգստեան կարգ, նուիրուած մեծ բարերարի մահուան 100-ամեակին:

Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանը կատարեց հոգեհանգստեան արարողութիւն, որից յետոյ, դիմելով հասարակութեանը, բարձր գնահատեց Ալեքսանդր Մանթաշովի ներդրումը հայ եկեղեցաշինութեան, արուեստի, գիտութեան եւ այլ բնագաւառներում:

Ցերեկոյթին մասնակցում էին Ալեքսանդր Մանթաշովի կառուցած Թբիլիսիի թիւ 43-րդ հանրային դպրոցի սաները եւ ուսուցչական կազմը, որը, չգիտես ինչու, կրում է ոչ թէ մեծ բարերարի, այլ բանաստեղծ Տիցիան Տաբիձէի անունը:

Բարերար Նելսոն Պետրոսեանը իր ելոյթում նշեց, որ ամէն ունեւոր հայ պէտք է ձգտի նմանուել Ալեքսանդր Մանթաշովին :

«հայարտունէ կենտրոնի մշակոյթի բաժնի ղեկավար Լեւոն Զիդիլեանը նշեց, որ այս տարի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու գաւթում կը տեղադրուի Ալեքսանդր Մանթաշովի արձանը , կը տպագրուի գիրք (հայրեն, վրացերէն եւ ռուսերէն լեզուներով) եւ տեղի կ'ունենայ գիտաժողով նուիրուած մեծ բարերարին:

Թրիլիսիում նշել են հայ բարերար Ալեքսանդր Մանթաշովի մահուան 100 տարին



Ապրիլի 19-ին հոլանդահայերը Հաագայում ցույց անցկացրեցին Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցի կապակցութեամբ

2011-04-20

Հանրահաւաքի ընթացքում ելոյթ ունեցան խորհրդարանի անդամները, հոլանդահայ կազմակերպութիւնների ներկայացուցիչներ: Այնուհետեւ հանրահաւաքի մասնակիցները քայլարշաւով շարժուեցին դէպի Հաագայում Թուրքիայի դեսպանութիւն, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամուլի, տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապի վարչութիւնը:

Չեխիայի հայ համայնքը կ'ոգեկոչի Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը

2011-04-20

Ելոյթներ կ'ունենան Չեխիայում Հայ առաքելական եկեղեցու հոգեւոր հովիւ Բարսեղ վարդապետ Փիլաւչեանը, Չեխիայում Հայաստանի Հանրապետութեան գործերի ժամանակաւոր հաւատարմատար Դաւիթ Ղուկասեանը, եւ այլք: Այնուհետեւ ներկաները կը դիտեն հեռուստալրագրող Արտեօմ Երկանեանի «թոռների պատասխանը» վաւերագրական ֆիլմը: Երեկոն կ'եզրափակուի դասական երաժշտութեան համերգով: Ելոյթներ կ'ունենան «մուզիկայ պօետիկալ չեխական երգչախումբը, ջութակահարներ Աննա Համբարձումեանը եւ Արմէն Սարգսեանը, պատանի դաշնակահար Սոնա Քոլոյեանը եւ երգչուհի Վարինէ Մկրտչեանը: Համերգային մասը կ'եզրափակի վիրտուոզ դաշնակահար Վազգէն Վարդանեանը, ասում է «օրերէ հանդէսի պաշտօնական կայքում:

Նոյն օրը Պրահայի Սուրբ Յիլիի եկեղեցում կը մատուցուի Սուրբ Զատիկի պատարագ, իսկ եկեղեցու հարեւանութեամբ գտնուող GH Art Gallery ցուցասրահում ժամը 19.00-ին կը բացուի հայ եւ օտար նկարիչների ցուցահանդէս:

Ապրիլի 24-ին ժամը 12.00-ին Յիլիաւայ քաղաքի Սուրբ Հոգու եկեղեցում տեղի կ'ունենայ ժամերգութիւն՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին: Կը կատարուի նաեւ Սուրբ Զատիկի աւանդական արարողութիւնը, իսկ Խաչքար յուշարձանի մօտ «հանուն իսաղաղութեանէ միջոցառմանը կը մասնակցեն նաեւ Յիլիաւայի Արուեստի գրաֆիկական դպրոցի սաները: Միջոցառումը կազմակերպել է «ուրարտուէ հայ-չեխական ընկերութիւնը:

Նիդերլանդներում տոնել են «միացեալ հայերը Հոլանդիայումէ միութեան եւ «վանէ կիրակնօրեայ դպրոցի 10-ամեակը

2011-04-19

Միջոցառմանը ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Նիդերլանդներում Հայաստանի դեսպան Զիննիկ Աղաջանեանը, ով բարձր գնահատեց հայապահպանութեան ուղղութեամբ իրականացրած նրանց գործունէութիւնն ու յետագայ յաջողութիւններ մատթեց աճող սերնդին հայեցի եւ ազգային արժէքների ոգով դաստիարակելու գործում, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամլոյ ծառայութիւնը:

Տօնական միջոցառմանը ներկայ էին Նայմէիենի քաղաքապետարանի, հայկական կազմակերպութիւնների եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:



Ապրիլի 16-ին յունահայ երիտասարդութիւնը բողոքի ցոյց անցկացրեց Աթէնքում Թուրքիայի դեսպանատան դիմաց

2011-04-19

Ապրիլի 23-ին Լոնդոնում՝ Օքսֆորդ սթրիթում, տեղի կ'ունենայ Հայոց ցեղասպանութեան զոհերի

յիշատակի երթ

2011-04-18

Երթը սկսուելու է ժամը 11:30-ին եւ տեւելու մինչեւ 14:30-ը:

Ինչպէս սպասուում է, երթին մասնակցելու են Լոնդոնի հայ համայնքի ներկայացուցիչներ, Մեծ Բրիտանիայում Հայաստանի դեսպանատան աշխատակիցներ, ուսանողներ:



Ֆրանսիայի հայ համայնքը նախագահ Սարկոզիին մեղադրում է դաւաճանութեան մեջ

2011-04-18

Նամակում մասնաւորապէս ասում է. «որպէս ֆրանսահայ լրագրող, Հայոց ցեղասպանութիւնից տուժած եւ Երկրորդ համաշխարհային

պատերազմի մասնակից իմ հօր որդին, ես , ինչպէս նաեւ այլ ֆրանսահայեր, որոնք «ինտելգրուել են ֆրանսիական հանրութեանը, խիստ վրդովուած եմ: Վրդովուած են նաեւ Ազգային ժողովի ու Սենատի պատգամաւորները՝ Wikileaks-ի միջոցով իմանալով, որ Ֆրանսիայի Հանրապետութեան նախագահը, աջակցութիւն խոստանալով Ֆրանսիայի հայ համայնքին Հայոց ցեղասպանութեան ուրացման դէմ պայքարում, հրաժարուել է իր խօսքից: Ես մեջբերում եմ Ձեզ. «Ես լիովին կ'իսում եմ ձեր այն ցանկութիւնը,

որ Ֆրանսիան պետք է դէմ հանդէս գա ոճրագործութեանը, բռնութեան քարոզչութեանը: Եւ Ֆրանսիան պետք է դատապարտի յանցագործութեան ժխտումը: Դա պետք է որոշեն խորհրդարանականները: Զոհերի ու նրանց հարազատների յիշատակը վիրաւորելու համար պետք է պատասխան տալ:

Խօսքի ազատութիւն չի նշանակում պատմութեան վերանայման ազատութիւն կամ ակնյայտ պատմական փաստերի մերժում: Ես չեմ ընդունում այն, որ ֆրանսահայերը սպառնալիքի տակ կը յայտնուեն, եթէ ընդունուի այդ օրէնքը:

Դա գրուած էր ապրիլի 24-ի Ձեր ուղերձում: Մի քանի շաբաթ անց, 2007թ. մայիսի 16-ին ձեր դեսպանորդ ու դիւանագիտական խորհրդական Ժան Դաւիթ Շելիտը, շտապեց հանգստացնել Թուրքիային Ձեր անունից:

Այդպիսով, մօտ 500 000 ֆրանսահայեր արդարացիօրէն գտնում են, որ Դուք նրանց դաւաճանել էք: Այդպիսով, օտարերկրեայ կառավարութիւնը կարող է ազդել Ֆրանսիայի քաղաքականութեան վրա...դայ կարելի էր ակնկալել, քանի որ Սենատում Թուրքիայի պետնախարար Էգեմէն Բաղլար 2011թ. ապրիլի 7-ին թոյլ տուեց իրեն դիմել սենատորներին՝ Հայոց ցեղասպանութեան քրէականացման մասին օրէնքի ընդունումից զերծ մնալու կոչով:

Յիշեցնեմ Ձեզ, որ միշտ հաւասարակշռուած Շառլ Ազնաւուրը յայտարարեց, որ հայ համայնքը չի քուէարկի Ձեր օգտին, եթէ օրէնքը չընդունուի: Դա կը նշանակի, որ Թուրքիայի ազդեցութիւնը հասաւ այն գագաթնակէտին, որը վնասում է պետական քաղաքականութեանը:

Պարոն նախագահ, հաւանաբար, Դուք կ'ընթերցէք այս նամակը, եթէ ժամանակ գտնէք: Ֆրանսահայերը մտադիր չեն կրկին անգամ զոհ դառնալ: Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցի եւ Հայոց ցեղասպանութեան ժխտման քրէականացման մասին օրէնքի քուէարկութեան շեմին Ֆրանսիայի հայ համայնքը կոչ է անում Ձեզ կատարել խոստումը:

Հասարակութիւն



1.5 միլիոն ծառ, 1.5 միլիոն նահատակ

2011-04-20

Յարկ ենք համարում նշել, որ մեր համատեղ առաջին ծառատունկը տեղի էր ունեցել 2010 թուականի նոյեմբերի 13-ին, Նորքի 5-րդ զանգուածի սբ.Սարգիս եկեղեցու շրջակայքում:

Այս տարի՝ ապրիլի 16-ին, Մփիւնքահայ ուսանողների խորհուրդը Համաշխարհային հայկական կոնգրէսի

Երիտասարդական կազմակերպութիւնների ասոցիացիայի հետ միասին ծառատունկ կազմակերպեցին Ծիծառնակաբերդի յարակից տարածքում, տնկելով շուրջ 300 ծառ եւ հիմնելով անմեղ նահատակների յիշատակը յաւերժացնող փոքրիկ պուրակ:

Ծառատունկն սկսուեց առաւօտեան 10-ին եւ տեւեց մօտաւորապէս 2 ժամ: Ծառատունկին ներկայ էին նաեւ Ռուսաստանի հայերի միութեան եւ Համաշխարհային հայկական կոնգրէսի նախագահ Արա Աբրահամեանը եւ ՀՀ Սփիւռքի նախարարի տեղակալ Վարդան Մարաշլեանը: Նրանք նոյնպէս իրենց մասնակցութիւնն ունեցան մեր այս կարեւոր առաքելութեան իրականացմանը, ինչը, ի հարկէ աւելի շատ ոգեւորեց մասնակիցներին եւ մեծ թափ հաղորդեց գործին: Նշենք, որ ծառատունկի մասնակիցներն անսահման խնամքով եւ գորովով էին վերաբերում այս նախաձեռնութեանը, եւ իւրաքանչիւրը ձգտում էր հնարաւորինս շատ ծառ տնկել եւ իր յարգանքի տուրքը մատուցել Ցեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակին:

Ծառատունկն իրականացնելուց յետոյ մեր խորհրդի անդամերն ուղեւորուեցին Ցեղասպանութեան թանգարան, իսկ անմար կրակի մօտ ՍՈՒԽ անդամներից մէկը՝ Ռուզաննա Էլչեանը, արտասանեց Հայոց Մեծ Եղեռնին նուիրուած բանաստեղծութիւն, ինչը բոլոր ներկաների մէջ մէկ անգամ եւս արթնացրեց բուռն հայրենասիրութիւն եւ միեւնոյն ժամանակ անսահման զայրոյթ՝ ոճիրն իրականացողների հանդէպ:

«մենք ուրախ ենք, որ Ռուսաստանի հայերի միութիւնը եւ Համաշխարհային հայկական կոնգրէսը նախաձեռնել է այս չափազանց կարեւոր շարժումը եւ մենք պատրաստ ենք շարունակել համագործակցել այս երկու համահայկական կառոյցների հետեւ,- նշեց Սփիւռքահայ ուսանողների խորհրդի նախագահ Սամուէլ Մկոյեանը:

Ուկրաինայում բազմաթիւ միջոցառումներով կը յարգեն Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը

2011-04-19

Ցուցադրութիւնից առաջ Analitika տեղեկատուական գործակալութեան փորձագէտ Երուանդ Երուանդեանը պատմել է Օսմանեան կայսրութիւնում Հայոց ցեղասպանութեան պատմութեան մասին, ինչպէս նաեւ Բաքում, Սումգայիթում եւ Մարաղայում հայերի ջարդերի մասին: Ապրիլի 20-ից միջոցառումներ են նախատեսուած Միմֆերոպոլում, Օդեսայում, Դոնեցկում: Ապրիլի 23-ին Օդեսայում տեղի է ունենալու պատմաբան, Analitika.at.ua-ի փորձագէտ Դաւիթ Դաւթեանի գրքի շնորհանդէսը՝ «հայոց ցեղասպանութիւնն Օդեսայի բնակիչների աչքերով»:

Ռուսաստանի հասարակութիւնը յարգանքի տուրք կը մատուցի Հայոց ցեղասպանութեան զոհերին

2011-04-19

Միջոցառումն անց է կացում «ռուս-հայկական համագործակցութիւնէ կազմակերպութեան կողմից Ռդ-ում Հայաստանի դեսպանատան հետ համատեղ, «ջավախքի որդիները կազմակերպութեան աջակցութեամբ: Միջոցառման պաշտօնական մասում հանդէս կը գան քաղաքական գործիչներ, դիւանագետներ ու հասարակական գործիչներ: Երեկոյի ընթացքում հանդէս կը գայ Ռուսաստանի Իւրլոյվի անուան պետական ակադեմիական երգչախումբը: Այդ միջոցառմամբ ռուս հանրութիւնը յարգանքի տուրք կը մատուցի Հայոց ցեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակին:

The Financial Times. Կոտորածը Դիարբեքիը նահանգում սատանայական մասշտաբների է հասել

2011-04-18

Երբ կայսրութիւնները պատերազմի մէջ մտան, Ռուսաստանը զգաց Օսմանեան կայսրութեան վերջնական պառակտումն առաջացնելու հնարաւորութիւնը: Օսմանները 1911-1913թթ. Լիբիական եւ Բալկանեան պատերազմներում կորցնելով իրենց տարածքի մէկ երրորդն ու բնակչութեան մէկ հինգերորդը՝ եզրակացրեցին, որ պետութիւնը փրկելու համար շատ աւելի ագրեսիւ մօտեցում է պահանջում: Պատերազմը միջհամայնքային լարուածութիւն առաջացրեց սահմանամերձ շրջաններում, որը պայթիւնի վերածուեց այն պայմաններում, երբ եւ՝ ռուսական, եւ՝ թուրքական ուժերը քաղաքացիական բնակչութեան դէմ ուղղուած յանցագործութիւններ էին կատարում: առաւել ցաւալի եւ յայտնի օրինակը հայերի տեղահանումն ու կոտորածն է Օսմանեան կայսրութիւնում 1915 թուականին:

Որոշ վայրերում, ինչպէս օրինակ Դիարբեքիը նահանգում, գրում է նա, «կոտորածը սատանայական մասշտաբների է հասել: Ռեյնոլդսը գրում է, որ վիճակագրական տուեալների առաւել հեղինակային հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ այն ժամանակ առնուազն 664 հազար հայ է զոհուել կամ նախապատերազմական Անատոլիայի հայ բնակչութեան 45%, սակայն որոշ գիտնականներ գտնում են, որ մահացութեան մակարդակն աւելի բարձր է եղել, եւ խօսում են առնուազն մէկ միլիոն զոհուածների մասին:

Մշակոյթ



Պատմաբան Ռայմոն Կեորկեանը ներկայացնում է «հայոց ցեղասպանութիւն. Ամբողջական պատմութիւն գիրքը

2011-04-23

Գրքում բերում են արխիվային փաստաթղթեր, ականատեսների վկայություններ, պարզաբանում է Հայոց ցեղասպանության տեղը թուրքական ազգային պետության ստեղծման գործում: Հեղինակը նաև դիտարկում է բռնագաղթն ու մեղաւորներին դատելու փորձերը: «այսօր սա ամենաամբողջական գիրքն է 1915թ. Հայոց ցեղասպանության մասին: Ռայմոնդ Կելտրկեանը նկարագրում է այն մահուան ուղին, որով անցան 1,5 մլն հայերը Օսմանեան կ'այսրութիւնումէ,-գրում է Le Monde-ը:

Կելտրկեանը պատմութիւն է դասաւանդում Փարիզի Մեն-դենի համալսարանի Աշխարհաքաղաքականութեան ֆրանսիական ինտիստուտում, «նութարեանէ գրադարանի տնօրէնն է ու Հայաստանի պատմութեան մասին գրքերի հեղինակը: Նա նաև «հայ ընդհանուր բարեգործական միութիւն՝ պատմութեան 100 տարիէ գրքի հեղինակն էէ:



Թբիլիսիի հայկական թատրոնը կը վերանորոգուի վրացական պետութեան միջոցներով

2011-04-22

Մասնաւորապէս Ռուտուան Յասմիկ Պօղոսեանին տեղեկացրել է, որ մշակոյթի նախարարութիւնը Թբիլիսիի Պետրոս Ադամեանի անուան հայկական պետական դրամատիկական թատրոնի շէնքի ամրակայման ու վերանորոգման աշխատանքների իրականացման համար յատկացրել է 1 մլն.200.000 ԱՄՆ դոլարին համարժէք գումար եւ շուտով կը սկսուեն շինարարական աշխատանքները (շէնքը կառուցուել է 1936 թ. եւ վերանորոգուել է ընդամենը մէկ անգամ):

Բացի դրանից, Պետրոս Ադամեանի անուան դրամատիկական թատրոնի թատերախումբը վրացական իշխանութիւնների ֆինանսական աջակցութեամբ հիւրախաղերով կը մեկնի Ամերիկայի Միացեալ Նահանգներ՝ տեղի հայ համայնքի հրաւերով:



Թուրք դերասանուհին խաղացել է Մեծ Եղեռնի մասին հայկական ֆիլմում

2011-04-21

Ինչպէս նշում են կազմակերպիչները, սա առաջին ֆիլմն է, որտեղ ցեղասպանութեան թեման դիտարկում է գաղթականների մի քանի սերունդների վրայ դրա ունեցած ազդեցութեան տեսանկյունից, եւ առաջին անգամ հայկական ֆիլմում նկարահանուել է թուրք դերասանուհի:

Ֆիլմի նկարահանումները կատարուել են Հայաստանում, Ամն-ում, Ֆրանսիայում, Արեւմտեան Հայաստանում (Թուրքիայ): Գլխաւոր դերերում նկարահանուել են տարբեր երկրներից հրաւիրուած դերասաններ՝ Ժան-պիեռ Նշանեան (ԱՄՆ), Արէն Վաթեան (ՌԴ), Արեւիկ Մարտիրոսեան (Ֆրանսիայ), Գիւնըշը Զան (Թուրքիայ), Կարէն Ջհանգիրեան: Ֆիլմի բեմադրող ռեժիսորներն են Արտակ Իգիթեանը եւ Վահան Ստեփանեանը, սցենարիստներ՝ Արմէն Վաթեան եւ Արէն Վաթեան, բեմադրող օպերատոր՝ Ռուբեն Շահբազեանց, բեմադրող նկարիչ՝ Գագիկ Բարայեան: Երաժշտութիւնը գրել է Հայկօն:

Իրադարձութիւնները համայն հայութեան համար ողբերգական 1915թուականի հետեւանքներն են, որ ծաւալուում են Գարապետ Փամբուկչեանի ընտանիքում: Նրանք Ամերիկա ներգաղթած հայերի 4-րդ սերունդն են ներկայացնում եւ կանգնած են «ամերիկաէ կոչուող վիթխարի բազմազգ խառնարանում ընդհանուրին միաձուլուելու վտանգի եզրին. մի կողմից որդին՝ ով ըմբոստանում է հօր ձեռնարկած արմատները պահպանելու փորձերի դէմ, միւս կողմից թոռը, ով սիրահարուել է թրքուհուն: Ութսունամեայ Գարապետը, որի մայրը հրաշքով փրկուել է եղեռնից, ձգտում է ամէն կերպ իր ամերիկանացուած սերնդի մէջ արթնացնել ու ամրացնել կորուսեալ Հայրենիքի հետ կապը, միայն այդպէս նա կը կարողանայ փրկել ընտանիքը օտարացումից եւ բաժանումից: Հանդիսատեսը ֆիլմը դիտելու հնարաւորութիւն կ'ունենայ ապրիլի 24-ից:

Բէլրութի «վահէ Սէթեանէ հրատարակչութիւնն առաջին անգամ մասնակցում է Գրքի երեւանեան տօնավաճառին

2011-04-21

Գրքի երեւանեան 7-րդ տօնավաճառին այս տարի մասնակցում են աւելի քան 30 հրատարակչութիւններ, որոնք ներկայացնում են տարբեր բովանդակութեան հայերէն գրքեր՝ հեքիաթներ, գեղարուեստական գրականութիւն, բառարաններ, ճանաչողական եւ այլ գրականութիւն: Յուցահանդէսը կազմակերպուել է Հրատարակիչների ազգային ասոցիացիայի կողմից: Բացի Լիբանանից, տօնավաճառին մասնակցում է նաեւ Իրանի Իսլամական Հանրապետութեան մշակութային կենտրոնը, որը ներկայանում է 78 անուն մանկական գրականութեամբ:

Լուսին Դինքը ֆիլմ կը նկարահանի Վիլեամ Սարոյեանի մասին

2011-04-20

Լուսին Դինքի՝ Հրանտ Դինքի եղբօր աղջկայ ֆիլմը կը պատմի 1964 թուականին Վիլեամ Սարոյեանի Բիթլիս կատարած ուղեւորութեան մասին:

Ըստ սցենարի՝ կը նկարահանուի այն ճանապարհը, որը Սարոյեանը անցել

է մինչեւ Բիթլիս, կը ցուցադրուեն արխիւային լուսանկարներ, նիւթեր եւ այսօրուայ Բիթլիսը: Կը լինի Սարոյեանի երկու պատմուածքների բեմադրում, եւ վերջում նրա բոլոր հերոսները կը հաւաքուեն մէկ հարկի տակ՝ անիմացիայի միջոցով: Նախատեսուում է համագործակցութիւն հայ անիմատորների հետ:

Նախագծի պրոդիւսերը համշենահայ ռեժիսոր, «ոսկէ ծիրան» կինոփառատօնի մրցանակակիր Օզջան Ալփերի եղբայրն է՝ Սոներ Ալփերը:



Բրատիսլաւայում էկումենիկ պատարագ է մատուցուելու՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին

2011-04-19

Պատարագը մատուցուելու է հայկական առաքելական եկեղեցու աւստրիական թեմի եւ Սլովակիայի, Չեխիայի ու Հունգարիայի հոգեւոր հովիւ՝ հայր Բարսեղ վարդապետ Պիլաւչեանի գլխաւորութեամբ, Սլովակիայի կաթողիկէ, ֆրանտիշկանեան, աւետարանական, յունա-կաթոլիկական, ճիզուիտական եկեղեցիների մասնակցութեամբ: Էկումենիկ պատարագից անմիջապէս յետոյ կը կատարուի ծաղկեպսակի մատուցման արարողութիւն Բրատիսլաւայի կենտրոնում տեղադրուած, 2004թ.-ին Սլովակիայի Ազգային Խորհրդի /ԱԽ/ կողմից՝ Հայոց ցեղասպանութեան բանաձեւի ընդունմանը նուիրուած, խաչքար-յուշակոթողի մօտ: Այնուհետեւ միջոցառման կազմակերպիչ Աշոտ Գրիգորեանը մասնակիցների պատուին կը մատուցի ճաշկերոյթ, հաղորդում է ԵՀՄՖ մամլոյ քարտուղարութիւնը:

Միջոցառմանը իրենց մասնակցութիւնը արդէն հաստատել են Սլովակիայի Ազգային Խորհրդի փոխնախագահ Պաւոլ Հրուշովսկին, ԱԽ առաջին նախագահ Ֆրնատիշէկ Միկլոշկոն, առաջին վարչապետ Եան Չառնոգուրսկին, գլխաւոր դատախազի տեղակալ Մարտին Լաուկոն, մի շարք դեսպանատների ղեկավարներ, այլ պաշտօնատար անձինք, լրագրողներ:

Հայ կատարողներով թուրքական երգչախումբը կարող է արժանանալ 2012-ի Խաղաղութեան Նոբելեան մրցանակի

2011-04-18

Երգչախմբի ղեկավար Յլմազ Օզֆիրատայի խօսքերով, երգչախմբում երգում են տարբեր մասնագիտութիւնների, կրօնական եւ էթնիկական պատկանելութեան տեր մարդիկ: Երգչախումբը կատարում է ինչպէս թուրքական, այնպէս էլ հայկական ժողովրդական երգեր:

Խաղաղության Նոբելեան մրցանակը շնորհում է 1901-ից: 2010-ին նրա դափնեկիր է դարձել չինացի Լիու Մեաոբոն: Աւելի վաղ խաղաղության Նոբելեան մրցանակ են ստացել ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման եւ ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչեօւը, ՀԱՀ նախկին նախագահ Նելսոն Մանդելան, ինչպէս նաեւ ՄԱԳՄԵ նախկին ղեկավար Մոհամմեդ էլ Բարադէին, որին հիմա անուանում են եգիպտական ընդդիմութեան ղեկավար:

ԱՄՆ-ում կը բացուի ամերիկահայ նկարիչ Արթուր Փինաջեանի անհատական ցուցահանդէսը

2011-04-18

Ցուցահանդէսը կը կրի «փինաջեան՝Արստրակցիայի հիմնադրման վարպետներից մէկը Խորագիրը եւ կը շարունակուի մինչեւ յունիսի 19-ը: Ցուցահանդէսին ընդհանուր թուով կը ներկայացուի ողջ կեանքի ընթացքում արուած 128 կտաւ:

Արթուր Փինաջեանը ծնուել է 1914 թ-ին Նիւ Ջերսիում: Նա սկսել է իր ճանապարհը 1930-ական թուականներին որպէս անիմատոր: Մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին եւ արժանացել է Բրոնզէ աստղի արիութեան համար:

Նրա աշխատանքները կարելի է բաժանել երկու ժամանակաշրջանի՝ Վուդսթրոքեան (1950 - 1973) եւ Բելվորթեան (1974 - 1999): Առաջին շրջանի աշխատանքներն աչքի են ընկնում աւելի յագեցած գունային գամմայով, իսկ երկրորդ շրջանը՝ աւելի նօսր եւ թոյլ գոյներով:

Ապրիլի 24-ի նախաշեմին Թուրքիայում լոյս կը տեսնի Վերժինէ Սվազեանի գիրքը Մեծ եղեռնի մասին

2011-04-18

850 էջից բաղկացած գրքի հայերէն եւ անգլերէն տարբերակները լոյս են տեսել օրերս, եւ ինչպէս յայտնեց Սվազեանը, գրքի թուրքերէն տարբերակը պարզապէս մի փոքր ուշանում է: Հայերէնից թուրքերէն թարգմանութեան հեղինակներն են Տիգրան Տէր-օդրմջեանը եւ Պետրոս Չաղիջեանը: Գիրքը լոյս է տեսնելու յայտնի թուրք իրաւապաշտպան Ռազրբ Չառաքոլույի «բելզէ հրատարակչատանը: Ինչպէս յայտնեց PanARMENIAN.Net ի թղթակցին Սվազեանը, թարգմանութիւնը նախապէս էր արուել եւ Չառաքոլուն իր 2011 թ. փետրուարին Հայաստան կատարած այցի ժամանակ սիրով համաձայնուեց լոյս ընծայել գիրքն իր տպագրատանը:

Վերժինէ Սվազեանի «հայոց ցեղասպանութիւն. Ականատես վերապրողների վկայութիւններէ գիրքը ընդգրկում է Հայոց

ցեղասպանության ակնատեսներից եւ նրանց երեխաներից գրառուած Եղեռնի մասին յուշերը, պատմական երգ-վկայութիւնները, որոնք հեղինակը գրի է առել 1955 թ.-ից սկսած: Բացի վերը նշուածներից, գրի են առնուել 5 արար հեղինակների յիշողութիւններ, ովքեր Դեր-գօր անապատից ընդունել են հայ գաղթականներին: Օգտագործուել են նաեւ ՀՀ ԳԱԱ Ցեղասպանության ինստիտուտի որոշ արխիւներ: Ընդհանուր թուով Վերժինէ Սվազլեանը հաւաքել է 700 միաւոր վկայութիւն: Այս ամէնից բացի, գրքում ընդգրկուած են նաեւ ամփոփումներ, համառօտագրութիւններ, ծանօթագրութիւններ, օտարալեզու բառարան, թեմատիկ, անձնանունների, տեղանունների ցուցիչներ, 288 միաւոր լուսանկար եւ քարտէզներ: